

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Ժողովրդավարությունը Հայաստանի Յառաջդիմության Գրառական

Անցեալ շաբաթ, Երեւանի մէջ կայացաւ Ժողովրդավարութեան Հայկական Համագումարը, որուն ընթացքին ՀՀ նախագահ Վահագն Նաչատուրեան իր խօսքին մէջ ընդգծեց, որ Ժողովրդավարութիւնը արդէն իսկ կայացած փաստ է Հայաստանի մէջ:

Հայաստանէն ներս Ժողովրդավարութեան ու ազատութիւններու էջը բացուեցաւ 2018-ի Ապրիլ-Մայիսին, երբ Հայաստանի քաղաքացիները հարիւր հազարներով փողոց դուրս գալով՝ թաւշեայ յեղափոխութեամբ տապալեցին նախկին վարչակարգը ու անոր բոլոր յոռի բարքերը:

Այդ օրուանէ ասդին երկիրը մեծ մասամբ հաւատարիմ մնաց այդ սկզբունքներուն, հակառակ դիմագրաւած բոլոր դժուարութիւններուն ու մարտահրաւերներուն: Նոյնիսկ 2022 թուականի 44-օրեայ պատերազմը չկարողացաւ կասեցնել Ժողովրդավարութեան յառաջընթացը ու իշխանութիւնները մնացին հաւատարիմ իրենց որդեգրած սկզբունքներուն:

Միջազգային իրաւապաշտպան կազմակերպութիւնները՝ բոլորն ալ իրենց զեկոյցներուն մէջ կը հաստատեն վերջին տարիներուն Հայաստանի մէջ արձանագրուող յառաջխաղացքը: Այսօր, ազատ է մամուլն ու համացանցը, իսկ ընտրութիւնները տեղի կ'ունենան ազատ ու արդար պայմաններու տակ: Լաւագոյն փաստերէն մէկը այն է որ, ընդդիմութիւնը իր տրամադրութեան տակ ունի հեռատեսիլի 5 ալիք եւ աւելի քան 15 լրատուամիջոց, որոնք առաւօտէն մինչեւ իրիկուն կը քննադատեն, չըսելու համար կը հայիոյեն, գործող իշխանութիւններուն, առանց վարանելու կամ վախճալու: Հայաստանի մէջ չկան նաեւ քաղաքական բանտարկեալներ:

Ինչ կը վերաբերի ընտրութիւններուն, անոնք տեղի կ'ունենան ազատ պայմաններու տակ եւ շատ տեղերու մէջ ընդդիմադիր կուսակցութիւններ ու թեկնածուներ կը կարողանան հասնիլ յաղթանակի:

Նոյն համագումարի ընթացքին Նիկոլ Փաշինեան յայտարարեց որ, Ժողովրդավարութիւնը Հայաստանի գլխաւոր վաճառանիշն է: Երկրորդում կատարեց վարչապետը: Այդ վաճառանիշով է որ, այսօր մեր Հայրենիքը կը ներկայանայ աշխարհին, ու անոր համար ալ կը կարողանայ


Երրօրեայ Առաջնորդները Ընդգծած Են ԼՂ Հայերու Իրաւունքներու Եւ Անվտանգութեան Երաշխիքներու Ներդրման Կարեւորութիւնը. Էլիզի Պալատ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան եւ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւ՝ Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնի, Գերմանիոյ վարչապետ Օլաֆ Շոլցի եւ Եւրոպական Խորհուրդի նախագահ Շարլ Միշելի հետ բանակցութիւններ կատարած են Յունիս 1-ին՝ Քիշնեւի մէջ:

Հանդիպման արդիւնքներով էլիզի պալատը յայտարարութիւն տարածեց, որուն մէջ ըսուած էր.

«ՀՀ վարչապետը եւ Ատրպէյճանի նախագահը վերահաստատած են 2022 թուականի Հոկտեմբեր 6-ին Փրակի մէջ ձեւակերպուած իրենց պարտաւորութիւնները՝ Ալմալ Աթայի հռչակագրով որոշուած սահմաններու պահպանման վերաբերեալ: Անոնք վերահաստատած են Հայաստանի ու Ատրպէյճանի տարածքային ամբողջականութեան փոխադարձ յարգանքը:

«Եւրոպական առաջնորդները Հայաստանին ու Ատրպէյճանին կողմէն ըրած են պահպանելու իրենց բոլոր պարտաւորութիւնները, մասնաւորապէս՝ ռազմագերիներու շու-



Հնգակողմ հանդիպման մասնակիցները՝ Քիշնեւի մէջ կայացած Ժողովի ընթացքին

տափոյթ ազատ արձակման վերաբերեալ: Անոնք նաեւ ընդգծած են Եւրոմիութեան դիտորդական առաքելութեան կարեւորութիւնը՝ ի նպաստ Հայաստանի:

«Եւրոպական առաջնորդները նաեւ ընդգծած են ԼՂ հայերու

իրաւունքներու եւ անվտանգութեան երաշխիքներու ներդրման կարեւորութիւնը:

Ֆրանսայի նախագահը յատուկ ընդգծած է որեւէ թշնամա-

Շար.ը էջ 5

«Հայաստանի Դիմագրաւած Մեծագոյն Մարտահրաւերը Արցախի Անվտանգութիւնն Եւ Ու Հայաթափունը Կանխելը», Յայտարարեց ՍԴՀԿ Ատենապետ Համբիկ Սարաֆեանը



Համբիկ Սարաֆեան (աջին) եւ Գրիգոր Խոտանեան քննարկումի ընթացքին

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Քաղաքական Դիւանի կազմակերպութեամբ տեղի ունեցաւ հանդիպում-քննարկում ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան ատենապետ Ընկ. Տոքթ. Համբիկ Սարաֆեանի հետ:

Հայաստան՝ «մարտահրաւերներ, վտանգներ եւ հեռանկարներ» խորագրին տակ միջոցառումը կայացաւ Հինգշաբթի, Յունիս 1-ի երեկոյեան, Փասատինայի ՀԿԲՄ-ի կեդրոնի սրահէն ներս:

Քննարկումը վարող՝ «Մասիս» Շաբաթաթերթի խմբագիր՝ Ընկ. Գրիգոր Խոտանեան նախ ներկայացուց Ընկ. Սարաֆեանի կենսագրական ամփոփ գիծերը եւ ապա տեղի ունեցաւ քննարկում՝ հարց ու պատասխանի ձեւաչափով, որուն մասնակցեցան նաեւ ներկաները:

Խօսելով օրուայ գլխաւոր թեմայի մասին ՍԴՀԿ ատենապետը ըսաւ.՝ «Հայաստանի դիմագրա-

Հայկակ Արշամեանի Մամլոյ Ասուլիսը՝ Լոս Անճելըսի Մէջ



«Հայաստան» Հիմնադրամի տնօրէն՝ Հայկակ Արշամեան մամլոյ ասուլիսի ընթացքին

Երկուշաբթի, Յունիս 5-ին, Հայաստանի Հանրապետութեան Կլէնտէլի հիւպատոսարանէն ներս տեղի ունեցաւ մամլոյ ասուլիս մը, որուն ընթացքին ելոյթ ունեցաւ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի վարիչ Տնօրէն՝ Պր. Հայկակ Արշամեան:

Ներկայ էին ԼոսԱնճելոսահայ մամլոյ ներկայացուցիչները:

Առաջին հերթին Պր. Արշամեան ողջունեց ներկաները եւ ներկայացուց Հիմնադրամի նպատա-

Շար.ը էջ 6

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Անհրաժեշտ է Օրակարգի Հարց Դարձնել Ատրպեյճանի Դեմ Պատժամիջոցների Կիրառումը

ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Մայիսի 28-ին Ատրպեյճանի նախագահ Իլհամ Ալիևը Լաչին/Բերձոր քաղաքում հանդես է եկել ելույթով՝ կրկին վերջնազրեքներ կայացնելով Արցախին եւ Հայաստանի իշխանութիւններին: Ալիևը, մասնաւորապէս, ասել է, որ Ատրպեյճանը Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողութիւն սկսելու բոլոր հնարաւորութիւններն ունի՝ պնդելով, որ Լեռնային Ղարաբաղի խորհրդարանը պէտք է ցրուի, նախագահը պէտք է յանձնուի, իսկ նախարարներն ու պատգամաւորները պէտք է լքեն իրենց պաշտօնները: Ատրպեյճանի նախագահը յաւելել է, որ միայն այդ ամէնից յետոյ հնարաւոր է լինելու մտածել համաներման մասին:

Ալիևը յայտարարել է նաեւ, որ հայ-ատրպեյճանական սահմանի դելիմիտացիան պէտք է իրականացուի Ատրպեյճանի պայմաններով՝ նշելով, որ եթէ դելիմիտացիան տեղի չունենայ, սահմանը լինելու է այնտեղ, որտեղ նրանք կը ցանկանան:

Մեծ հաշուով Ատրպեյճանի նախագահը Լաչինում հնչեցրել է այն ռազմավարական նպատակները, որոնք Պաքուն հետապնդում է Ղարաբաղեան երկրորդ պատերազմի աւարտից յետոյ: Այնուամենայնիւ, պատահական չէ նաեւ, որ վերոնշեալ ռազմատենչ յայտարարութիւնները հնչեցուել են այս ժամանակահատուածում, երբ խաղաղութեան պայմանագրի շուրջ բանակցութիւնները, կարծես թէ, մտել են եզրափակիչ փուլ:

Ինչպէս յայտնի է, խաղաղու-

թեան պայմանագրի օրակարգում կողմերի մօտեցումների միջեւ ամենաառանցքային տարբերութիւնը Պաքու-Ստեփանակերտ ուղիղ բանակցային մեխանիզմի ստեղծման հարցում է: Երեւանը պնդում է, որ այդ մեխանիզմը պէտք է լինի միջազգային կամ միջազգային ակտիւ ներգրաւուածութեամբ, Պաքուն բացառում է միջազգային մեխանիզմի ստեղծման հնարաւորութիւնը: Հայաստանի պաշտօնական դիրքորոշումն այն է, որ առանց այս հարցի շուրջ համաձայնութեան հնարաւոր չէ որեւէ փաստաթուղթ ստորագրել Ատրպեյճանի հետ:

Լաչինում արած իր յայտարարութիւններով Ալիևը փաստացիօրէն բացառում է ոչ միայն միջազգային բանակցային մեխանիզմի ստեղծման, այլեւ Պաքու-Ստեփանակերտ որեւէ երկխօսութեան հնարաւորութիւնը: Եթէ Ատրպեյճանը պնդում է, որ Լեռնային Ղարաբաղում որեւէ ներկայացուցչական Մարմին չպիտի գոյութիւն ունենայ, ապա պարզ չէ, թէ ում հետ նրանք պէտք է բանակցութիւններ վարեն:

Այս ելույթով Ատրպեյճանի նախագահը հերթական անգամ բացառել է նաեւ Լեռնային Ղարաբաղի հայերի իրաւունքների ու անվտանգութեան երաշխիքների քննարկումը: Ալիևը իր յայտարարութեան մէջ նշել է, որ Լեռնային Ղարաբաղի հայերը պէտք է ընդունեն Ատրպեյճանի օրէնքները եւ ապրեն որպէս «լոյսլ եւ նորմալ քաղաքացիներ»:

Ակնայայտ է նաեւ, որ այս յայտարարութիւններով Ալիևը

ազդարարում է Արցախում նոր ռազմական սադրանքների իրականացումը: Սա վերջին շրջանում Ատրպեյճանի համար սովորական դարձած գործելաոճ է: Լաչինի միջանցքի արգելափակումից առաջ եւս Պաքուն ուղիղ տեքստով խօսում էր դրա մասին: Յատկանշական է, որ վերջին շրջանում Ատրպեյճանի պաշտպանութեան նախարարութիւնը եւս տեղեկատուական հող էլ է նախապատրաստում նմանատիպ գործողութիւնների համար՝ յայտարարելով, որ Արցախի Պաշտպանութեան Բանակը խախտում է հրադադրի ռեժիմը առաջնագծի տարբեր հատուածներում: Վերջին օրերին Ատրպեյճանական կողմը մեծացնում է նաեւ առաջնագծում կիրառուող զինատեսակների տրամաչափը:

Ալիևի յայտարարութիւնն այն մասին, թէ դելիմիտացիան պէտք է իրականացուի Ատրպեյճանի պայմաններով եւս ուշադրաւ է: Սա փաստացիօրէն պատմական քարտէզների հիման վրայ դելիմիտացիայի գործընթացի վերաբերեալ խօսույթի շարունակութիւնն է:

Յատկանշական է նաեւ, որ մինչ Նիկոլ Փաշինեանը վերջին շրջանում պարբերաբար յայտարարում է Ատրպեյճանի տարածքային ամբողջականութիւնը 86,600 քառակուսի քիլոմէթր սահմաններում ճանաչելու մասին, Հայաստանի տարածքային ամբողջականութիւնը կոնկրետ սահմաններով ճանաչելու մասին յայտարարութիւններ Պաքուից չէին հնչում: Ամենայն հաւանականութեամբ, կողմերը Պրիւսելում չեն կարողացել համաձայնութեան գալ նաեւ քար-

տէզների շուրջ, որոնք պէտք է լինեն դելիմիտացիայի գործընթացի հիմքում: Այդ առումով պէտք է արձանագրել, որ ՀՀ իշխանութիւնները հերթական անգամ գնացել են լուրջ զիջումների՝ փոխարէնը ոչինչ չստանալով:

Ատրպեյճանի նախագահի այս ելույթը ցոյց է տալիս, որ Պաքուն հակուած կը լինի որեւէ փաստաթուղթ ստորագրելու Հայաստանի հետ, միայն այն դէպքում, եթէ այն լինի կապիտուլյացիոն բնույթի եւ թոյլ կը տայ լեգիտիմացնել իր ազդեւիւ գործողութիւնները գետնի վրայ: Ալիևի յայտարարութիւններից կարելի է դատել նաեւ, որ Ատրպեյճանը լուրջ ռազմական սադրանքների է նախապատրաստում Լեռնային Ղարաբաղում: Այդ առումով Հայաստանի իշխանութիւնները պէտք է Ատրպեյճանի դէմ պատժամիջոցների կիրառումը տարբեր ազդեցիկ դերակատարների կողմից օրակարգային խնդիր դարձնեն: Տարբեր վստահելի աղբիւրներ հաղորդում են, որ Միացեալ Նահանգները դիտարկում են Պաքուի դէմ պատժամիջոցների կիրառման հարցը, եթէ վերջինս Լեռնային Ղարաբաղում լայնածաւալ ռազմական գործողութիւններ սկսի: Եթէ այս տեղեկութիւնը համապատասխանում է իրականութեանը, ապա Երեւանը պէտք է ակտիւացնի աշխատանքներն այս ուղղութիւնով:

«ՄԻՎԻՆԵԹ»

Եկեղեցու Կարեւոր, Միաժամանակ Ծանր Ու Բարդ Նախաձեռնութիւնը. Վե՞ր, Թե՞ Կար

ՅԱԿՈԲ ԲԱԴԱՆԵԱՆ

Հայ Առաքելական եկեղեցու ղեկավարութիւնը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխաւորութեամբ, նախաձեռնել է հասարակական-քաղաքական քննարկումների հարթակ, անուանելով այն «Գաւիթ» եւ անցկացնելով առաջին քննարկումը Հայաստանի եւ Արցախի անվտանգութեան թեմայով: Թէեւ ՀԱԵ ղեկավարութեան նախաձեռնութեան ֆորմալ ապաքաղաքականութեանը կամ վերաքաղաքականութեանը, քննարկման ներգրաւուած յարգարժան անձանց շարքը բաւականին ընդգծուած է Հայաստանի քաղաքական ղեկավարութեան հանդէպ արմատական ընդդիմադիր հայեացքի եւ գնահատականների շրջանակով: Իսկ հարթակի ստեղծման վերաբերեալ վեհափառ Հայրապետի խօսքում նշուած է, որ. « «Գաւիթ» հարթակը հիմնադրվել է՝ տարբեր համոզմունքների եւ հայացքների տեր հեղինակաւոր հասարակական եւ քաղաքական գործիչների, մասնագէտների մասնակցութեամբ քննարկելու ազգային, հոգեւոր, կրթական, մշակութային, քաղաքական, սոցիալական ոլորտներում մեր ազգին ու Եկեղեցուն յուզող կենսական հիմնահարցեր՝ նախանշելու դրանց յարթահարման ուղիներ, ինչպէս եւ նպաստելու հանրութեան մէջ երկխօսութեան ու համերաշխութեան

մթնոլորտի ձեւաւորմանը: Այս կարեւոր նպատակին է կոչուած ծառայելու նորաստեղծ հարթակը»:

Վերաքաղաքական բազմազանութեան նպատակը շատ կարեւոր է ու եկեղեցին թերեւս փորձում է այդ նախաձեռնութեամբ իրականացնել վերկուսակցականութեան եւ վերաքաղաքականութեան մի կարեւոր առաքելութիւն, որ ըստ էութեան կարող է համարժեք լինել նրա ինստիտուցիոնալ դերին ու նշանակութեանը: Բայց, այդ դերն ու նշանակութիւնը հերթական հարուածը կը ստանան եւ կը դառնան պարզապէս բաժանարար գծեր խորացնող մի նոր բաղադրիչ, եթէ վերաքաղաքական հոչակագրի ներքոյ, ՀԱԵ ղեկավարութեան նախաձեռնութիւնը պարզապէս դառնայ քաղաքական ղեկավարութեան հանդէպ ընդդիմադիր տրամադրութիւնների քաղաքական սպասարկման ձեւաչափ:

Ի վերջոյ, Հայաստանի հանրութիւնն իր անցած երեք տասնամեակի ընթացքում եւ առ այսօր թէ իշխանութիւնների, թէ ընդդիմութիւնների մակարդակում տեսել է այնքան ու այնպիսի հնարքներ ու հնարամտութիւններ, որ ձեռք է բերել այդ ամէնը տարբերակելու ահռելի փորձ եւ անգամ ինստիտուցիալ: Հանրութիւնն իրապէս ունի համարժեք եւ բո-

վանդակային վերաքաղաքական առաքելութեան անհրաժեշտութիւն, յատկապէս այն հանրութիւնը, որ վերջերս հրապարակուած սոցհարցումներից մէկի համաձայն՝ իր 64 տոկոսով պարզապէս չի վստահում որեւէ քաղաքական ուժի: Բայց, հանրութիւնը չի վստահելու նաեւ որեւէ քաղաքական ուժի «կամուֆլիաժի» դեր ստանձնող որեւէ միաւորի: Իսկ անմիջապէս հասկանալ, կամ առնուազն «զգալ» այդպիսի հանգամանքները, հանրութիւնը, կրկնեմ՝ կարող է գրեթէ ակնթարթօրէն: Այդ առումով, Հայ Առաքելական եկեղեցու ղեկավարութեան նախաձեռնութիւնն ինքնին կարեւոր ու արժէքաւոր է, բայց, առկա է մի կարեւոր հարց՝ եկեղեցու ղեկավարութիւնը ինքը կարո՞ղ է վերկանգնել քաղաքական նշանոցներից եւ շահերից, ու ապահովել հենց այն բազմազանութիւնը, որը պէտք է դառնայ Հայաստանում տարբեր քաղաքական մօտեցումներ ու պատկերացումներ ունեցողների երկխօսութեան հարթակ, այդ կերպ ծառայելով ոչ իբրեւ որեւէ քաղաքական միաւորի կամ հոսանքի «ծածկ», այլ նոր քաղաքական մշակութային նշանոցեր սահմանել քաղաքական ուժերի եւ տարբեր խմբերի համար: Սա շատ

Շար.ը էջ 6



ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՆՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷ ԱԶԱՊԱՐԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the **Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

ՀՀ Կառավարութիւնը Հաստատեց ԱՄՆ-ի Հետ Միջուկային Անվտանգութեան Հարցերով Համագործակցութեան Մասին Համաձայնագիրը

Հաւանութիւն տրուած է 2023 թուականի Մարտ 14-ին Ուաշինգտոնի մէջ ստորագրուած «ՀՀ Միջուկային Անվտանգութեան Կարգաւորման Կոմիտէի եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Միջուկային Կարգաւորող Յանձնաժողովի միջեւ միջուկային անվտանգութեան հարցերով տեխնիկական տեղեկատուութեան փոխանակման եւ համագործակցութեան մասին» համաձայնագիրը հաստատելու մասին» ՀՀ նախագահի հրամանագրի նախագիծին:

Նոր համաձայնագրով կ'ընդլայնուի համագործակցութիւնը աթոմային ուժանիւթի օգտագործման բնագաւառի միջուկային ու ճառագայթային անվտանգութեան կարգաւորման հարցերով: Այն պիտի նպաստէ անվտանգութեան հարցերով յառաջադէմ փորձի ու գիտելիքներու փոխանակման, նոր արհեստագիտութիւններու ներդրման: Համաձայնագրով առաջարկուող համագործակցութիւնը ուղղուած է Հայաստանի մէջ կարգաւորող ենթակառուցուածքի ուժեղացման, անձնակազմի ունակութիւններու եւ կարողութիւններու զարգացման, որ պիտի նպաստէ աթոմային էլեկտրակայաններու շահագործման ժամկէտի երկարացման, Հայաստանի մէջ նոր աթոմային էլեկտրակայանի կառուցման արտօնագրութիւն ստանալու փուլերուն մէջ անվտանգութեան վերլուծութեան ու գնահատման իրականացման: Համաձայնագրով ստացուած գիտատեխնիկական աջակցութիւնը պիտի նպաստէ ֆիզիքական պաշտպանութեան, միջուկային գէնքի չտարածման երաշխիքներու իրականացման, ռատիօօքթիլ նիւթերու եւ թափօններու անվտանգութեան, շրջակայ միջավայրի վերահսկողութեան իրականացման, անվտանգութիւնը կարգաւորող փաստաթուղթերու մշակման համար:

կողմ համագործակցութիւնը ուղղուած է Հայաստանի մէջ կարգաւորող ենթակառուցուածքի ուժեղացման, անձնակազմի ունակութիւններու եւ կարողութիւններու զարգացման, որ պիտի նպաստէ աթոմային էլեկտրակայաններու շահագործման ժամկէտի երկարացման, Հայաստանի մէջ նոր աթոմային էլեկտրակայանի կառուցման արտօնագրութիւն ստանալու փուլերուն մէջ անվտանգութեան վերլուծութեան ու գնահատման իրականացման: Համաձայնագրով ստացուած գիտատեխնիկական աջակցութիւնը պիտի նպաստէ ֆիզիքական պաշտպանութեան, միջուկային գէնքի չտարածման երաշխիքներու իրականացման, ռատիօօքթիլ նիւթերու եւ թափօններու անվտանգութեան, շրջակայ միջավայրի վերահսկողութեան իրականացման, անվտանգութիւնը կարգաւորող փաստաթուղթերու մշակման համար:

Սամուէլ Բաբայեան Կ'առաջարկէ Ստեփանակերտ-Պաքու Երկխօսութիւն

Արցախի խորհրդարանի մեծութեամբ երկրորդ ուժի՝ «Միասնական Հայրենիք» կուսակցութեան ղեկավար Սամուէլ Բաբայեան հանդէս կու գայ Ստեփանակերտ-Պաքու ուղիղ երկխօսութեան օգտին. «Ակնյայտ է, որ Արցախի ժողովուրդը Ալիեւի պահանջով չի կազմալուծելու պետական հիմնարկները եւ ինքն իրեն չի գրկելու անկախ միաւոր ըլլալուց, այդ թւում՝ հետագայ բանակցութիւններում: Ալիեւի հռետորաբանութիւնը ոչ միայն խորացնում է ատելութեան մթնոլորտը, այլեւ հրահրում նոր սրացումներ, որից, ի դէպ չի շահելու առաջին հերթին Ատրպէյճանը»:



Արցախի «Միասնական Հայրենիք» կուսակցութեան ղեկավար Սամուէլ Բաբայեան

կողմէ Արցախը Ատրպէյճանի կազմին մէջ ճանաչուլու մասին յայտարարութիւնները՝ Արցախը, Սամուէլ Բաբայեանի համոզմամբ, պարտաւոր է ինքնուրոյն քաղաքականութիւն վարել՝ նախաձեռնելով Ստեփանակերտ-Պաքու ուղիղ բանակցութիւններ եւ անոնց շնորհիւ ձեւաւորել Ատրպէյճանի հետ փոխվստահութեան մթնոլորտ. «Այդ կերպ միայն նարաւորութիւն կը ստեղծուի Արցախում ապահովել ժողովրդի անվտանգութիւնը»:

Եթէ Պաքու-Ստեփանակերտ Երկխօսութիւնը Տեղի Չունենայ, Խնդիրը Պիտի Չլուծուի. Ալէն Սիմոնեան

Ազգային ժողովի նախագահ Ալէն Սիմոնեան կը կարծէ, որ միջազգային մեխանիզմներու ներքոյ Ստեփանակերտի եւ Պաքուի միջեւ երկխօսութիւնը շատ կարեւոր է նաեւ Ատրպէյճանի համար, որովհետեւ, եթէ այդ երկխօսութիւնը չկայանայ, խնդիրը պիտի չլուծուի: Աժ նախագահը այս մասին ըսաւ լրագրողներու հետ ձեպագրոյցին ընթացքին:

Հարցումին, թէ Հայաստանի համար սկզբունքային է Պաքու-Ստեփանակերտ միջազգային երկխօսութեան ձեւաւորումը՝ հաշուի առնելով այն, որ Ատրպէյճանը չի

համաձայնիր անոր, Ալէն Սիմոնեան պատասխանեց.

«Մենք պէտք է հասնենք նրան, որ Ատրպէյճանը նախ ու խօսի դրամասին, որովհետեւ հակառակ պարագայում նոյն Ատրպէյճանին ձեռնտու իրավիճակ չի ստեղծուի, կը լինի մի մեծ բաց, որը տարիների, տասնամեակների ընթացքում չի կարողանալու փակել: Եթէ Ատրպէյճանը չնստի ու չխօսի Արցախում բնակող հայ բնակչութեան հետ, այդ վերքը մի օր պտուղներ տալու է», ըսաւ Սիմոնեան՝ յաւելելով, որ միջազգային գործօնը եւ միջազգային ճնշումը մեծ դեր ունին»:

Վարչապետը Որպէս Վկայ Հարցաքննուած Է Պետական Դաւաճանութեան Վերաբերեալ Քրեական Գործի Ծիրին Ներս

ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինեան առերեւոյթ պետական դաւաճանութեան յատկանիշերով յարուցուած քրեական գործի ծիրին մէջ հարցաքննուած է որպէս վկայ: Ազգային ժողովին մէջ, Աժ մշտական յանձնաժողովներու համատեղ նիստին ընթացքին այս մասին յայտնած է ՀՀ Քննչական կոմիտէի նախագահ Արգիշտի Քեարամեանը՝ պատասխանելով «Հայաստան» խմբակցութեան քարտուղար Արծուիկ Մինասեանի հարցին:

«Պարոն վարչապետը որպէս վկայ է հարցաքննուել», նշած է Քեարամեան:

Արսէն Թորոսեանը Հարցաքննելու Անհրաժեշտութիւն Կայ. Սասուն Խաչատրեան



Հակափտածութեան կոմիտէի նախագահ Սասուն Խաչատրեան

Հակափտածութեան կոմիտէի նախագահ Սասուն Խաչատրեանը առողջապահութեան նախկին նախարար, «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցութեան պատգամաւոր Արսէն Թորոսեանը Քովիտի ընթացքին կատարուած չարաշահումներու գործի ծիրին մէջ հարցաքննելու անհրաժեշտութիւն կը տեսնէ: Այս մասին Սասուն Խաչատրեանը ըսաւ լրագրողներու հետ ձեպագրոյցի ընթացքին:

«Զգիտեմ, քննիչը ծանուցումը ուղարկել է, թէ չէ, բայց կարծում եմ, որ Արսէն Թորոսեանին հարցաքննելու անհրաժեշտութիւն կայ», ըսաւ Խաչատրեան:

Քովիտի ընթացքին կատարուած չարաշահումներու գործի ծիրին մէջ կալանաւորուած էր 2020-2022 թուականներու առողջապահ



Նախկին Գաղափար Արսէն Թորոսեան

հուստեան նախարարի տեղակալի պաշտօնը զբաղեցուցած Գէորգ Սիմոնեանը, որ այժմ ազատ արձակուած է, «Մետլայն» բժշկական կեդրոնի տնօրէն Բաբգէն Շահումեանը եւ Թոքաբանութեան ազգային կեդրոնի ղեղակալուն բաժանմունքի վարիչը, որոնց նկատմամբ որպէս խափանման միջոց կիրառուած է տնային կալանքը:

Ըստ Հակափտածութեան կոմիտէին մէջ քննուող վարոյթին՝ Գէորգ Սիմոնեանը, 2020-2022 թուականներու ընթացքին զբաղեցնելով ՀՀ առողջապահութեան նախարարի տեղակալի պաշտօնը, անձնական շահագրգռութեան հետեւին կալանաւորուած էր իր ծառայողական պարտականութիւնները, որուն հետեւանքով էական վնաս պատճառուած է պետութեան օրինական շահերուն:

«Պատիւ Ունեմ» Դաշինքի Շտաբի Պետը Ընտրակաշառք Բաշխելու Համար Դատապարտուած Է 4 Տարի Բանտարկութեան

«Պատիւ Ունեմ» կուսակցութիւններու դաշինքի նախընտրական շտաբի պետ Վ. Հ.-ն Արարատի եւ Վայոց ձորի մարզերու Առաջին ատենանի ընդհանուր իրաւասութեան դատարանի՝ 2023 թուականի Մայիս 25-ի դատավճռով, մեղաւոր ճանչցուած է 2021 թուականի Յունիս 20-ին կայացած Ազգային ժողովի ընտրութիւններուն ընտրողներուն ընտրակաշառք տալու համար:

Այս մասին տեղեկացուցած են Գլխաւոր դատախազութեան չիչեցնելով, որ «Պատիւ Ունեմ» կուսակցութիւններու դաշինքի նախընտրական շտաբի պետ Վ. Հ.-ն 2021 թուականի Յունիսին նախնական համաձայնութեան եկած էր նոյն շտաբի հաւաքարար Ն.Մ-ի հետ եւ «Պատիւ Ունեմ» կուսակցութիւններու դաշինքի օգտին քուէարկելու համար՝ Նորամարտ հա-

մայնքի շարք մը բնակիչներուն մէջ ձայնի դիմաց տուած էր 15 հազարական դրամ կաշառք:

Չեռք բերուած պայմանաւորուածութեան համաձայն՝ 2021 Յունիս 16-18 ինկած ժամանակահատուածին, Նորամարտ համայնքի վարչական տարածքին մէջ, Շտաբի պետ Վ. Հ.-ն Շտաբի հաւաքարար Ն.Մ-ի հետ, իսկ վերջինս նաեւ Նորամարտ համայնքի բնակիչներ է.Կ.-ի եւ Ի.Ա.-ի հետ խումբի կազմին մէջ, նախնական համաձայնութեամբ 645 հազար դրամի չափով կաշառք տուած են Նորամարտ համայնքի շարք մը ընտրողներու:

Դատարանի դատավճիռով՝ վերոնշեալ անձերը մեղաւոր ճանչցուած են իրենց վերագրուող արարքներու կատարման մէջ. Վ. Հ.-ն դատապարտուած է 4 տարի բանտարկութեան:

ԼՈՒՐԵՐ

Փաշինեան Մասնակցեցաւ Եւրոպական Քաղաքական Համայնքի Գագաթաժողովին



Եւրոպական քաղաքական համայնքի գագաթաժողովի մասնակիցներու խմբային նկարը

Վարչապետ Նիկոլ Փաշինեան Քրիշնեի մէջ մասնակցեցաւ Եւրոպական քաղաքական համայնքի երկրորդ գագաթաժողովին:

Աւելի քան չորս տասնեակ երկիրներու ղեկավարները միջոցառման վայրին մէջ դիմաւորած է Մոլտովայի նախագահ Մայա Սանտուն, որմէ յետոյ սկսած են գագաթաժողովի աշխատանքները: Յաջորդիւ կայացած է միջոցառման մասնակիցներու լուսանկարահանման արարողութիւնը:

Վարչապետ Փաշինեան մասնակցած է նաեւ «Ուժանիւթ, կապ» թեմայով կրոր սեղան քննարկման:

Նիկոլ Փաշինեան գագաթաժողովի ծիրին մէջ կարճատեւ գրոյցներ ունեցած է շարք մը երկիրներու ղեկավարներու հետ:

Մասնաւորապէս, փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող հարցերու շուրջ վարչապետը զրուցած է Սլովենիոյ վարչապետ Ռոպերթ Կոլոպի, Լատվիոյ վարչապետ Քրիշթեանիս Քարինշի, Միացեալ Թագաւորութեան վարչապետ Ռիշի Սունաքի, Ֆրանսայի նախագահ էմանուէլ Մաքրոնի, Անտորրայի վարչապետ իսպիեր Զամորայի, Լիթուանիոյ նախագահ Կիթանաս Նավետայի, Վրաստանի վարչապետ Իրաքլի Գաբրիաշվիլիի, Հոլանտայի վարչապետ Մարք Ռութէի, Փորթուգալի վարչապետ Անթոնիո Գոշթայի, Շուէտի վարչապետ Ուլֆ Քրիսթերսոնի, Շուէտի նախագահ Ալէն Պերսեթի, Եւրոպական Խորհուրդի նախագահ Շարլ Միշէլի հետ:

Հայաստանը Զէնք Գնելու Հարցով Աշխոյժ Բննարկումներ Կ'ունենայ Բազմաթիւ Երկիրներու Հետ. Արմէն Գրիգորեան

Հայաստանի Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեանը յայտնած է, որ կան բազմաթիւ երկիրներ, որոնց հետ Հայաստանը աշխոյժ քննարկումներ կ'ունենայ զէնք զնելու հարցով:

Հանրային հեռուստաընկերութեան տուած հարցազրոյցին ընթացքին Արմէն Գրիգորեան ընդգծած է, որ որոշ պարագաներու արդէն արդիւնքներ կան, որոշ երկիրներու հետ ալ բանակցութիւնները կը շարունակուին:

Գրիգորեան ընդգծած է, որ Հայաստանը հաշուի կ'առնէ այն իրողութիւնը, որ Ռուսիան Ուքրանիոյ հետ պատերազմը սպասարկելու ինչպէս որ ունի եւ անոր կարողութիւնները չեն բաւարարեր, որպէսզի նաեւ զէնքի արտա-

հանում իրականացնէ: «Այս ամէնը հաշուի առնելով՝ Հայաստանը գնացել է այլ աղբիւրներ փնտելու ճանապարհով», նշած է Գրիգորեան:

Հայաստանի Անվտանգութեան Խորհուրդի քարտուղարը նաեւ նշած է, որ Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի Կազմակերպութեան անդամ ըլլալը այս պահին չի սահմանափակեր Հայաստանի համագործակցութիւնը տարբեր երկիրներու հետ՝ չնայած նախապէս որոշակի սահմանափակումներ եղած են: «Մենք աշխոյժ աշխատում ենք նաեւ մեր արեւմտեան գործընկերներին հետ անվտանգութեան ոլորտում մեր համագործակցութիւնն ամրապնդելու համար եւ շարունակելու ենք այս աշխատանքը», ըսած է Գրիգորեան:

Մենք Այդ Կ'ընդունինք Ի Գիտութիւն. Փետրով՝ Ռուս-Ուքրանական Պատերազմին Վերաբերեալ ՀՀ Վարչապետի Յայտարարութեան Մասին

Ռուսիոյ նախագահի խօսնակ Տմիթրի Փեսքով մեկնաբանած է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի յայտարարութիւնը:

Ան մասնաւորապէս նշած է. «Ուքրանիայի հետ պատերազմում մենք Ռուսաստանի դաշնակիցը չենք: Եւ մեր զգացումն այդ պատերազմից, այդ հակամարտութիւնից՝ անհանգստութիւն է, որովհետեւ դա ուղիղ ազդում է մեր բոլոր յարաբերութիւնների վրայ»:

Փետրով մասնաւորապէս յայտ-

նած է. «Մենք այդ կ'ընդունինք ի գիտութիւն. այդ կարեւոր յայտարարութիւն է: Մենք գիտենք, որ Ուքրանիոյ շուրջ հակամարտութեան վերաբերեալ Հայաստանի մօտեցումներուն մէջ կան որոշակի նրբերանգներ, ու մենք անոնք հաշուի կ'առնենք», ըսած է Փեսքով:

Փետրով նաեւ յաւելած է, որ կը շարունակեն զարգացնել «հայեցակարգային դաշնակցային յարաբերութիւնները» Հայաստանի հետ:

Մեր Դաշնակիցները Աւելի Լաւ Է Որեւէ Յայտարարութիւն Չընեն, Քան Ըսեն, Որ Չկայ Սահմանագիծ. Արարատ Միրզոյեան

Արտաքին յարաբերութիւններու եւ ֆինանսավարկային եւ պիւտճեային հարցերու մշտական յանձնաժողովներու համատեղ նիստին՝ պատասխանելով Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Քրիստինէ Վարդանեանին, արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան ըսաւ. «Ինչ վերաբերում է ձեր արձագանքին, թէ մենք ամէն ինչ անում ենք նախկինների նման, մենք գրեթէ ոչինչ չենք անում նախկինների նման: Ես կը խօսեմ նաեւ իմ ոլորտի մասին եւ կարող եմ մի նախադասութեամբ ուղղակի ասել՝ հետագայ խօսակցութիւնն այս մասին բացառելու համար: Բայց չեմ խուսափի, եթէ կ'ուզէք»:

Ի յաւելումն ան ըսաւ, որ ամենակարեւոր բաներն են ինչ իրենք չեն ըներ նախկիններուն նման՝ արտաքին յարաբերութիւններու ոլորտին մէջ, իրենք հրապարակաւ ե՛ւ ընդդիմութեան, ե՛ւ հանրութեան կ'ըսէին այն, ինչ որ կը բանակցէին եւ իրենց հրապարակային դիրքորոշումը համանման է անոր, ինչ իրենք որդեգրած են եւ ցոյց կու տան բանակցութիւններու ընթացքին՝ փակ դռներու ետին: Խօսելով նաեւ ՀԱՊԿ-ի մասին՝ նախարարը ըսաւ, որ Սեպտեմբերին ՀՀ ինքնիշխան տարածքը խախտուած է, սահմանը խախտուած է, ըստ այդմ կարիք կայ ուղարկելու վերահսկողական առաքելութիւն, սա իրենց պատկերացմամբ պիտի ըլլայ այն ռազմաքաղաքական դաշինքի նուազագոյն արձագանգը, որուն մէջ մենք կանք, մաս ենք, անդամ ենք:

«Այդ նախագծի մէջ, մեր միւս գործընկերների կողմից այս-



Արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան

պիսի պնդում անելը մինչ այս պահը հնարաւոր չի եղել: Մա ինչով է վտանգաւոր: Չճշդելով, որ ՀՀ ինքնիշխան տարածքը խախտուել է եւ ՀՀ պետական սահմանը խախտուել է օրինակ՝ սեպտեմբերեան ներխուժման դէպքում, ստացուում է, որ օրինականացուում է ատրպէյճանական խօսույթը, սահմանը սահմանազատուած չի, ոչ մէկը չգիտի որտեղ է յստակ սահմանը, հետեւաբար, ոչ մէկը չի կարող ասել ատրպէյճանական գործը մտել է ՀՀ տարածք, թէ չէ: Տուեալ դէպքում, մեր դաշնակիցներն աւելի լաւ է՝ որեւէ յայտարարութիւն չանեն, քան անեն յայտարարութիւն, որը կ'օրինականացնի խօսույթն այն մասին, որ եթէ չկայ սահմանագիծ, դժուար է դատապարտել մէկին կամ ճշդել որեւէ մէկին, թէ ով ում տարածք է մտել», ըսաւ Արարատ Միրզոյեան:

Առաջին Անգամ Հայաստանը Ղեկավարի Մակարդակով Մասնակցեցաւ Թուրքիոյ Նախագահի Երդմնակալութեան

Ռեճեպ Թայյիպ էրտողանը երդմնակալութեամբ ստանձնեց Թուրքիոյ նախագահի պաշտօնը: Այդ արարողութեան հրաւիրուած էին տասնեակ երկիրներու ղեկավարներ ու բարձրաստիճան պաշտօնեաներ, այդ շարքին՝ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

Փաշինեանին կ'ուղեկցէր Ազգային ժողովի փոխխօսնակ, Հայաստան-Թուրքիա երկխօսութեան գործընթացին մէջ հայկական կողմի բանագնաց Ռուբէն Ռուբինեանը: Անգարայի «Էսենայոկա» օդակայանին մէջ զանոնք դիմաւորած է հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորման թրքական կողմի բանագնաց դեսպան Սերտար Քըլըճը:

Սա առաջին անգամ էր, որ Հայաստանը պետութեան ղեկավարի մակարդակով կը մասնակցէր Թուրքիոյ նախագահի երդմնակալութեան արարողութեան: Մինչ այս միայն մէկ անգամ՝ 2014-ի Օգոստոս 28-ին արտաքին գործե-



Վարչապետ Փաշինեանը կը դիմաւորուի Թուրքիոյ արտաքին գործերու նախարար Սեվալուօ Զաուլչօղլուի կողմէ

րու նախարար էտուարտ Նալպանտեանը մասնակցած էր արարողութեան:

Թուրքիոյ նախագահական համալիրին մէջ վարչապետ Փաշինեանը դիմաւորած է Թուրքիոյ արտաքին գործերու նախարար Մեվլութ Զաուլչօղլուն:

Պետութեան ղեկավարներէն Անգարա կը գտնուէր նաեւ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւը: Ռուսիան միջոցառման ընթացքին կը ներկայացնէր Պետական Տումայի խօսնակ Վեաչեսլաւ Վոլոտինը, իսկ Ուաշինկթընը ներկայացած էր Թուրքիոյ մէջ Միացեալ Նահանգներու դեսպանին մակարդակով:

Պաքու Անխուսափելի Կը Համարէ Հայաստանի Հետ Խաղաղութեան Պայմանագրի Ստորագրումը

Ատրպէյճանի արտաքին գործերու նախարար Ճէյհուն Պալա-մով անխուսափելի համարած է Հայաստանի հետ խաղաղութեան պայմանագրի ստորագրումը:

«Մայիսին աշխոյժ բանակցութիւններ տեղի ունեցած են: Սկիզբը Ուաշինկթընի մէջ (Ատրպէյճանի եւ Հայաստանի արտաքին գործերու նախարարներուն մակարդակով), ապա՝ Մոսկուայի մէջ: Բացի անկէ, երկու երկիրներուն ղեկավարները քանի մը անգամ հանդիպած են: Մօտ ժամանակներս Ուաշինկթընի մէջ տեղի պիտի ունենայ բանակցութիւններու հերթական փուլը (արտաքին գործերու նախարարների մակարդակով)», լրագրողներուն ըսած է Պալաճով: Նշելով նաեւ, որ Մայիսին կայացած բանակցութիւններու օրակարգային թեմաներէն մէկը եղած է Ապրիլին Հայաստանի մէջ ձերբակալուած ատրպէյճանցի զինուորներուն ճակատագիրը:

Անոր խօսքով՝ Ատրպէյճանը հանդէս եկած է Հայաստանի հետ

խաղաղութեան պայմանագիր կնքելու նախաձեռնութեամբ՝ հիմնուած միջազգային իրաւունքին համահունչ 5 հիմնական սկզբունքներու վրայ:

«Խաղաղութիւնը անխուսափելի է, յարաբերութիւններու կարգաւորման համաձայնագիր պէտք է ստորագրուի», ըսած է ան:

Պալաճով միաժամանակ նշած է, որ խաղաղութեան պայմանագրով կան կէտեր, որոնք համաձայնեցուած չեն կողմերուն միջեւ, ուստի բանակցութիւնները պիտի շարունակուին:

Ատրպէյճանի արտաքին գործերու նախարարը նաեւ կը կարծէ, թէ, ընդհանուր առմամբ, տարածաշրջանին մէջ տեղի կ'ունենան շատ կարեւոր գործընթացներ:

Քիչնեւեան բանակցութիւններէն յետոյ հայ համայնքին հետ հաղնիպման ժամանակ վարչապետ Փաշինեան տեղեկացուցած էր, որ Յունիս 12-ին Ուաշինկթընի մէջ կը սպասուի Հայաստանի եւ Ատրպէյճանի արտաքին գործերու նախարարներու հանդիպում:

Ուաշինկթըն «Անհամբեր Կը Սպասէ» Պաքուի Եւ Երեւանի Միջեւ Բանակցութիւններու Նոր Փուլին

Ուաշինկթըն «անհամբեր կը սպասէ» Պաքուի եւ Երեւանի միջեւ բանակցութիւններու նոր փուլին, յայտնած է ԱՄՆ Պետական Բարտեղարութեան խօսնակի տեղակալ Վետանթա Փաթեւը:

Հարցումին, թէ ի՞նչ մանրամասնութիւններ կրնայ փոխանցել պետական քարտուղար Պլինքընի եւ Ատրպէյճանի ու Հայաստանի արտաքին գործերու նախարարներու՝ յաջորդ շաբթուան հանդիպումէն, Փաթեւ պատասխանած է՝ «Ես յստակ տեղեկատուութիւն չունիմ ժամկէտերու կամ պետական քարտուղարի ժամանակացոյցին մասին: Բայց, այո՛, մենք անհամբեր կը սպասենք այս ամիս Ուաշինկթընի մէջ կայանալիք բանակցութիւններու հերթական փուլին, քանի որ կողմերը կը շարունակեն ձգտիլ Հարաւային Կովկասի տարածաշրջանի խաղաղ պայագային»:

Փաթեւ վերահաստատած է, որ ուղիղ երկխօսութիւնը խնդիրներու լուծման եւ կայուն ու արժանապատիւ խաղաղութեան հասնելու բանալին է:

«Միացեալ Նահանգները գոհ է, որ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ բանակցութիւնները կը շարունակուին տարբեր հարթակներու վրայ, այդ շարքին՝ վերջերս կայացած առաջնորդներու հանդիպումը: Բայց ես այլեւս ոչինչ ունիմ ըսելու այս մասին», ըսած է Փաթեւ:

Երոպական Առաջնորդները Ընդգծած Են

Շարունակուած էր 1-էն կան հռետորաբանութեան հրաժարելու եւ ի նպաստ տարածաշրջանի ամբողջ բնակչութեան՝ խաղաղութեան վերականգնման ուղղութեամբ ջանքերու շարունակման կարեւորութիւնը»:

Փաշինեան Հնգակողմ Հանդիպման Մասին

Վարչապետ Նիկոլ Փաշինեան եւս որոշ մանրամասնութիւններ ներկայացուց Քիչնեւի մէջ կայացած հնգակողմ հանդիպման արդիւնքներէն:

Հայ համայնքի հետ հանդիպման ժամանակ Նիկոլ Փաշինեան նշեց, որ հնգակողմ հանդիպման ընթացքին, ի թիւս այլ հարցերու, քննարկուած են տարածաշրջանային հաղորդակցութիւններու, գերիներու եւ անհետ կորսուածներու, նաեւ՝ Լեռնային Ղարաբաղի հայութեան իրաւունքներու եւ անվտանգութեան հետ կապ-

ուած հարցերը:

«Տարածաշրջանային հաղորդակցութիւնների հետ կապուած վերահաստատեցինք, որ կողմերի ինքնիշխանութեան եւ իրաւագործութեան ներքոյ պատրաստ ենք հաղորդակցութիւնների բացմանը՝ 2020 թվականի Նոյեմբերի 9-ի եռակողմ յայտարարութեան 9-րդ կէտի համաձայն: Քննարկել ենք գերիների եւ անհետ կորածների հետ կապուած հարցեր, մարդասիրական այլ հարցեր:

«Նաեւ մանրամասն քննարկում տեղի ունեցել է Լեռնային Ղարաբաղի հայութեան իրաւունքների եւ անվտանգութեան ապահովման շուրջ երկխօսութեան հարցերի շուրջ: Այստեղ Երոպայի մեր գործընկերներն են որոշակի դիրքորոշումներ արտայայտել:

«Նաեւ պայմանաւորուածութիւն է ձեռք բերուել, որ Յունիսի 21-ին տեղի կ'ունենայ յաջորդ եռակողմ հանդիպումը Պրիւքսէլում», ըսաւ վարչապետը:

Ժողովրդավարութիւնը Հայաստանի Հիմնական Վաճառանիշն Է, Մեր Խնդիրն Է, Որ Մարդը Ըլլայ Պաշտպանուած Ու Երջանիկ Փաշինեան



Վարչապետ Նիկոլ Փաշինեան ելոյթ կ'ունենայ ժողովրդավարութեան Հայկական Համագումարի ժամանակ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան կ'ընդգծէ, որ ժողովրդավարութիւնը Հայաստանի հիմնական մակնիշն է: Ժողովրդավարութեան Հայկական Համագումարին ժամանակ ունեցած ելոյթին վարչապետը արձանագրեց, որ Հայաստանի մէջ համացանցը ազատ է, մամուլը ազատ է, ընտրութիւնները ազատ են՝ շեշտելով, որ այս ամէնը կը ներկայացնէ ոչ թէ որպէս ձեռքբերում, այլ՝ առօրէականութիւն:

«Երբ 2018 թվականին տեղի ունեցաւ ոչ-բռնի, Թաւշեայ չեղափոխութիւնը, եւ մենք ասում էինք, որ ժողովրդավարութիւնը Հայաստանի հիմնական մակնիշն է, շատերը կասկածով էին վերաբերում, որովհետեւ ասում էին, որ յետեղանքափոխական էջֆորայի պայմաններուն մէջ կառավարութիւնը առանձնապէս ազատութիւնները սահմանափակելու կարիք չունի էլ: Բայց այն փաստը, որ ժողովրդավարութեան Հայկական Համագումարը առաջին անգամ մեր երկրում տեղի ունեցաւ 2022 եւ ոչ թէ 2019 թվականին, խօսուն փաստ է, որովհետեւ երբ մենք ընդգծում էինք 2018 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրութիւնների ազատ լինելը, էլի դա որոշակիօրէն դրուում էր հարցականի տակ՝ իսկ ինչպիսի՞ն կը լինեն ընտրութիւններն այլ պայմաններում», նշեց վարչապետը:

Վարչապետը ընդգծեց, որ այլ պայմաններու մէջ ընտրութիւնները նոյնպէս տեղի ունեցան՝ նկատի ունենալով 2021 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրութիւնները, որուն նախորդած էր Արցախեան 44-օրեայ պատերազմը:

Փաշինեան նկատեց, որ այդ պարագային ալ արձանագրեցին, որ այդ այլ պայմաններուն մէջ ընտրութիւնները ամենեւին ալ պակաս ազատ եւ ժողովրդավարական չեն:

Անոր խօսքով՝ այն, որ ժողովրդավարութիւնը Հայաստանի հիմնական մակնիշն է, ամենեւին ալ հանգամանքներու բերումով տեղի ունեցած պատահականութիւններու արդիւնք չէ, այլ գիտակցուած քաղաքական ընթացք է, որ Հայաստանի կառավարութիւնը եւ ժողովուրդը կը վարեն:

Վարչապետը կը շեշտէ, որ շատ լուրջ հաստատութեանական բարեփոխումներ դեռ ընթացքի մէջ են, որոնք իրենց հետ պիտի բերեն մարդու իրաւունքներու պաշտպանութեան աւելի բարձր մակարդակ, օրէնքի գերակայու-

թեան աւելի բարձր մակարդակ, հակախտածութեան քաղաքականութեան աւելի բարձր մակարդակ:

Փաշինեան կը համարէ, որ այն տնտեսական բարձր աճը, որ Հայաստանը այսօր ունի, նաեւ տնտեսական ազատութիւններու արդիւնք է. եթէ տնտեսութիւնը կառավարելի ըլլար եւ կառավարող ըլլար պետութեան կողմէ, յատկապէս յետպատերազմեան շրջանին մէջ շատ լուրջ եւ խոր խնդիրներ պիտի ունենայինք, բայց, քանի որ այդ ազատութիւնները հասած են նաեւ տնտեսութեան մակարդակ, ամենադժուար եւ վճռական պահին այդ ազատութիւնները եկան օգնութեան:

Փաշինեան արձանագրեց, որ Հայաստանի մէջ ժողովրդավարութեան սպառնացող որեւէ ներքին վտանգ չկայ: Բոլոր հնարաւոր վտանգները արտաքին են, որոնք հանրապետ են եւ բոլորին տեսանելի: Միեւնոյն ժամանակ, ՀՀ վարչապետը կարեւոր կը համարէ, որպէսզի կարենան ապացուցել, որ ժողովրդավարութիւնը ի վիճակի է նաեւ անվտանգութիւն ապահովել:

Ժողովրդավարութիւնը պիտի շարունակէ ըլլալ Հայաստանի հիմնական մակնիշը: Փաշինեան յոյս ունի, որ այն նաեւ յարակից եւ աջակցող մակնիշներ պիտի ունենայ շարունակաբար, որոնցմէ մէկը պիտի ըլլայ տնտեսական բարձր աճը, երկրորդը՝ խաղաղութիւնը:

Անոր խօսքով՝ այս եռամիասնութիւնն է, որ պէտք է ծառայէ բուն նպատակին:

«Մենք խօսում էք ազատութիւնների մասին, բայց ազատութիւնը գերնպատակ չէ, ազատութիւնը միջոց է՝ ապահովելու մարդու բարեկեցութիւնը եւ երջանկութիւնը: Մա է այն բարձրագոյն նպատակը, որը մենք մեր առաջ դնում ենք, որովհետեւ մեր խնդիրը հետեւեալն է, որ ազատութեան եւ ժողովրդավարութեան պայմաններում մարդը Հայաստանում լինի բարեկեցիկ, լինի պաշտպանուած, լինի երջանիկ, կարողանայ զբաղուել իր սիրած գործով եւ իր սիրած գործի արդիւնքներով ապահովի սեփական բարեկեցութիւնը եւ նաեւ՝ երկրի բարեկեցութիւնը: Ի հարկէ, ժողովրդավարութիւնը, մեր ընկալմամբ, սրա համար անհրաժեշտ, բայց ոչ-բաւարար պայման է, եւ մենք պէտք է ապահովենք հաստատութեանական մնացած պայմանները նոյնպէս, որպէսզի այս տեսլականը դառնայ իրականութիւն», եզրափակեց Փաշինեան:

Հայաստանի Դիմագրաւած Մեծագոյն Մարտահրաւերը

Շարունակուած էջ 1-էն

ւած մեծագոյն մարտահրաւերը իր տարած քայլին ամբողջականութիւնը պահպանելը եւ Արցախահայութեան անվտանգութիւնն ու հայաթափումը կանխելն է, որ աւելի կը բարդանայ Ուքրանիոյ պատերազմի հետեւանքով՝ Արեւելք-Արեւմուտք յարաբերութիւններու խիստ վատթարացման լոյսին տակ, որ իր անմիջական անդրադարձը կ'ունենայ մեր տարածաշրջանէն ներս: Այս իրավիճակին մէջ շատ աւելի կը կարեւորուի այդ շահերու բախման կիզակէտէն որքան հնարաւոր է հեռու պահել երկիրը՝ վարելով իրապաշտ, կշռադատուած եւ բազմաբեւեռ արտաքին քաղաքականութիւն, ինչին այսօր մենք ականատես ենք: Հայաստանի տարածքային ամբողջականութեան համար մեծ սպառնալիք է անշուշտ «Ջանգեզուրեան» միջանցքի հարցի արձարծուծը: Ու հակառակ այն հանգամանքին, որ Հայաստանի իշխանութիւնները բազմիցս յայտարարած են, որ այդ հարցը քննարկման ենթակայ չէ, հարցը կը շարունակէ մնալ օրակարգի վրայ, որովհետեւ այդ մէկը կը բխի ոչ միայն Ատրպէյճանի, այլ նաեւ Ռուսաստանի շահերէն: Մեծագոյն վտանգը անշուշտ պատերազմն է, որ կրնայ հրահրուիլ ոչ անպայման Ատրպէյճանի նախաձեռնութեամբ»:

Ատրպէյճանի հետ խաղաղութիւն հաստատելու մասին հարցին պատասխանելով Ընկ. Սարաֆեան յայտնեց, որ խաղաղութեան օրակարգը իսկապէս այլընտրանք չունի: «Անշուշտ այդ չի նշանակէր, որ պիտի դիւրին ըլլայ եւ խաղաղութեան հասնելու պայմանները ամբողջովին ընդունելի պիտի ըլլան, սակայն որեւէ այլ մօտեցում աւելի հաւանական կը դարձնէ զինուորական մագլցումը: Այնուամենայնիւ, չի բացառուիր, որ խաղաղութեան միտուած բոլոր ջանքերը ձախողին եւ պատերազմը վերսկսի, սակայն մենք պէտք է խոսափինք, որեւէ կեցուածք որդեգրելէ, որ ուղղակի կամ անուղղակի կերպով կը նպաստէ իրավիճակի սրացման: «Si vis pacem, para bellum»՝ եթէ կ'ուզես խաղաղութիւն, պատրաստուիր պատերազմի: Մենք պէտք է հետեւողական

ըլլանք մեր կառուցողական կեցուածքին մէջ, միաժամանակ տասնապատկելով ջանքերը՝ արդիականացնելու հայոց բանակը, բարձրացնելու անոր մարտունակութիւնը եւ սպառազինելու զայն ամենարդիական ռազմատեսակներով: Մէկ խօսքով, խոսափինք պատերազմէն ամէն գնով, բայց պատրաստ ըլլանք եթէ ան պարտադրուի մեզի: Միւս կողմէ, շատ դիւրին է արմատական եւ անզիջող դիրք բռնելը, մանաւանդ երբ որոշման պատասխանատուութիւնը քուկո չէ: Սակայն խիզախութիւնը արմատական ըլլալը չէ, այլ դժուարին եւ անբաղցալի որոշումներ առնելն է, քաջ գիտակցելով, որ զայիք ծանր քննադատութեան եւ պիտակաւորման ալիքը: Ահա այս էր հիմնական պատճառներէն մէկը, որ նախկին իշխանութիւնները համարձակութիւնը չունեցան լուծման միտող քայլեր առնելու, որ ձեւով մը հասցուց մեզ այս օրուան»:

Թուրքիոյ հետ յարաբերութիւններուն վերաբերել Ընկ. Սարաֆեան ըսաւ թէ, Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններու կարգաւորումը անհրաժեշտութիւն է եւ որպէս դրացի երկիրներ կանխատեսելի յարաբերութիւնը միայն օգտակար կրնայ ըլլալ երկուստեք: «Մենք պէտք է վերլուծենք եւ հասկնանք յարաբերութիւններու հաւանական վերահաստատման եւ սահմանի բացման ընկերային, տնտեսական եւ քաղաքական հնարաւորութիւնները եւ վտանգները: Յստակ է, որ Թուրքիոյ համար Հայաստանի հետ սահմանի բացման գլխաւոր ակնկալութիւնը տնտեսական է՝ Հայաստանի վրայով ուղղակի կապ հաստատելու միջին ստիական շուկաներու հետ: Փոխադարձաբար, Հայաստանի համար ծովային ելք կը բացուի Տրապիզոնի նաւահանգիստով եւ ուղիղ ցամաքային կապ արաբական շուկայի հետ: Անշուշտ այդ ամէնը չի նշանակէր, որ մեր պահանջատիրութիւնը կը մոռցուի կամ կ'անտեսուի: Մենք կը մնանք յանձնառու, սակայն նաեւ գիտակից առաջնահերթութիւններուն, որ այս պարագային Հայաստան պետութեան զարգացումն ու բարգաւաճումն է», շեշտեց Ընկ. Սարաֆեան:

Ժողովրդավարութիւնը Հայաստանի Յառաջդիմութեան Գրաւական

Շարունակուած էջ 1-էն

ընդլայնել իր բարեկամներու շրջագիծը՝ յատկապէս արեւմտեան երկիրներուն մօտ, որոնք տարբեր ձեւերով կ'օժանդակեն Հայաստանի քաղաքական շահերուն երբ մեր աւանդական դաշնակիցները կը թերանան իրենց պարտաւորութիւններուն մէջ:

Ժողովրդավարութիւնը ունի նաեւ իր տնտեսական բաղադրիչը, որուն շնորհիւ գործարարներն ու առեւտրականները ազատօրէն յառաջ կը տանին իրենց գործերը ու պետական գանձ կը մուծեն հարկաւոր միլիոն տոլարներ, առանց մտավախութիւն ունենալու, որ իրենց ձեռքէն կրնան խլուիլ իրենց պատկանող գործարարներն ու վաճառատուները: Տնտեսութիւնը դադարած է ըլլալ սահմանափակ թիւով մարդկանց մենաշնորհը ու այդ մարդէն ներս աւելի մեծ թիւով քաղաքացիներուն մասնակցութիւնն ու արդար մրցակցութիւնը պատճառներէն մէկն է՝ Հայաստանի մէջ արձանագրուող տնտեսական անախտընթաց աճին:

Այս բոլորով հանդերձ, ամէն ինչ չէ որ սահուն կ'ընդամայ: Ժողովուրդի մօտ դատարաններու նկատմամբ անվստահութիւնը կը շարունակէ մնալ երկրի ամենէն խոցելի կողմերէն մէկը: Արդար դատարանները եւս կարելոր են ժողովրդավարութեան անրապնդ-

ման ուղղութեամբ: Ժողովուրդի կենսամակարդակի բարձրացումը ու ընկերային ապահովութիւնը եւս կարելոր գործօններ են ժողովրդավարութեան զարգացման մէջ:

- Արամ Խաչատուրեանի հոգում այնքան էլ վաղ չեն դրսեւորուել երաժշտական ունակութիւնները եւ միայն 19 տարեկան հասակում է ինքնակրթութեամբ զբաղուել երաժշտութեամբ: Հիմնականում թիֆլիսի բազմազգ ժողովրդական երաժշտական արուեստը եղաւ նրա առաջին հաղորդակցութիւնը երաժշտական աշխարհի հետ: Հայկական աշուղական արուեստը, սազանդարներն ու գուռնաչիները եղան նրա առաջին ուսուցիչները:

Նկատեմք սակայն, որ լսելով ժողովրդական բանահիւսութեան հրաշալի նմուշներ, Խաչատուրեանը երբեք չի ընդօրինակել եւ կրկնօրինակել դրանք: Ժողովրդական երաժշտութիւնից վերցրել է միայն ու միայն ազգային-պարային տարատեսակ ռիթմերը:

-Յիշում եմ,- գրում է Խաչատուրեանը,- թէ ինչպէս պղնձէ լազանը (տաշտ) ձեռքիս բարձրանում էի ձեռնալարի եւ եռանդագին նրա վրայ թիֆլիսացնում էի իմ լսած եւ ինձ զարմացրած ժողովրդական ռիթմերը՝ փորձելով նորութիւն մտցնել դրանց տարբերակման ու գուգորդման մէջ:

Ստորագործական ակնառու տուեալների շնորիւ, ինքնուս Արամին յաջողում է ընդունուել Մոսկուայի երաժշտական ուսումնարանի՝ սկզբում թաւջութակի, իսկ յետոյ ստեղծագործական դասարանը: 1922-29 թ.թ. նրա ուսուցիչներն են լինում նշանաւոր մանկավարժ-կոմպոզիտորներ Գնեսինը, Գլիլէրը, Բիչկովը եւ ուրիշներ: 1934-36 թ.թ. Խաչատուրեանը իր ստեղծագործական տաղանդը ամբողջացնում է խորհրդային նշանաւոր կոմպոզիտոր Մեակովսկիի դասարանում:

Դեռեւս ուսանողական տարիներին, Խաչատուրեանը յօրինում է մի շարք սենեկային-գործիքային ստեղծագործութիւններ, որոնք այսօր էլ տեղ են գտնում երաժիշտ-կատարողների երկացանկում:

Ժիշդ է, որ Խաչատուրեանի ստեղծագործական գործունէութիւնը հիմնականում ծաւալուեց Մոսկուայում, սակայն նա մշտապէս կապ է պահպանել հայ մշակուցի հետ: Եւ այդ կապերի ամբարանումը նպաստել է Մոսկուայի Հայաստանի Մշակութային Տանը նրա ծաւալած աշխոյժ գործունէութիւնը: Այդ տանը նա ստեղծագործական եւ կատարողական սերտ կապերի մէջ է եղել Ալ. Սպենդիարեանի, Մարտիրոս Սարգեանի, Ծարա Տալեանի հետ: Իսկ նշանաւոր բեմադրիչ Ռուբէն Սիմոնովի ղեկավարած դրամատիկական ստուգիայի բեմադրած Յակոբ Պարոնեանի «Արեւելեան ատամնաբոյժ», «Պաղտասար աղբար» եւ Սունդուկեանի «Խաթաբալա» ներկայացումները կենդանի հաղորդականութիւն վայելեցին խանդավառ հանդիսատեսի շրջանում՝ շնորհիւ Խաչատուրեանի գունագեղ երաժշտութեան:

Թատերական ներկայացումների համար Արամ Խաչատուրեանի գրած երաժշտութեան շնորհիւ, անցեալ դարի 30-ական թուականներին մի նոր դարաշրջան է բացուում Հայաստանի եւ ողջ Խորհրդային Միութեան դասական, սիմֆոնիկ երաժշտութեան յետագայ զարգացման համար:

Համաշխարհային երաժշտական արուեստի, ուսական երաժշ-

տական դպրոցի եւ, յատկապէս հայ երաժշտական մշակուցի ձուլարանում է ձեւաւորուում Արամ Խաչատուրեանի երաժշտական մտածողութիւնն ու գրեթատը: Նրա երաժշտութիւնը սերտօրէն կապուած է կոմիտասի, Ռոմանոս Մելիքեանի, Ալ. Սպենդիարեանի, յատկապէս՝ ժողովրդական երաժշտութեան հետ:

Արամ Խաչատուրեանը երբեք չէր մոռանում իր մեծանուն ուսուցիչների անունները թուելուց առաջ նշել հայ ժողովրդի երաժշտութեան Մեսրոպ Մաշտոց կոմիտասի անունը եւ հպարտութեամբ բարձրաձայնում էր.

«Կոմիտասը՝ հայ երաժշտական դպրոցի հիմնադիրը, եղել է եւ կը մնայ իմ մեծ ուսուցիչը: Երբ մտածում եմ կոմիտասի մասին, լիաթոք շնչում եմ իմ Հայաստանի օդը »:

Իր գործերը յօրինելիս, Արամ Խաչատուրեանը հիմնականում օգտուել է հայ ժողովրդական գործիքային երաժշտութեան հարուստ շտեմարանից:

Իր ստեղծագործութիւններում Խաչատուրեանը չի ձգտել բնօրինակի տեսքով պահել ժողովրդական երաժշտութիւնը, այլ համարձակօրէն, դրանց մէջ գտնելով բազմաթիւ չ'երեւացող, ստուերում ընթացող ենթաձայներ, դրանք վեր է հանել ու նոր, շքեղ հանդերձանքով է ներկայացրել ունկնդրին:

Ինչպէս գրում է մամուլը, « Լայնօրէն օգտագործելով ժողովրդական ինտոնացիաները, ռիթմերը, Խաչատուրեանը երեւան է հանում դրանց մէջ թաքնուած ներքին ուժը, կենդանի, որոնք երաժշտական լարուած զարգացման ազատ հոսքի մէջ, դրանք ձեռք են բերում նոր կեանք, նոր յատկութիւններ »:

Արամ Խաչատուրեանը սիմֆոնիկագրիչ (սիմֆոնիկ հնչողութեան, - Հեն Ա.) է ենթարկել ժողովրդական երաժշտութիւնը, որի շնորհիւ էլ այն հարստացել է նոր բովանդակութեամբ, նոր կերպարներով, նոր ձեւերով ու արտայայտչամիջոցներով:

Քսաներորդ դարի հայ դասական երաժշտութեան առաջին բալետի («Երջանկութիւն»), յետագայում «Գայանէ», առաջին սիմֆոնիայի, առաջին գործիքային կոնցերտների (Չուլիսի, դաշնամուր, թաւջութակ) հեղինակը Արամ Խաչատուրեանն է, ինչպէս նաեւ հայկական առաջին հնչուն «Պեպօ» ֆիլմի երաժշտութեան հեղինակը:

Ապրելով իր ժամանակակից կոմպոզիտորներ Շոստակովիչի եւ Պրոկոֆեւի կողքին, նրանց պէս գրելով սիմֆոնիաներ, Խաչատուրեանը իր համար գծեց ինքնուրոյն ուղի, այն է՝ սիմֆոնիկ երաժշտութիւնը մօտեցնել ժողովրդական երաժշտութեանը:

«Սիմֆոնիայի մեղեդիները պէտք է յիշուեն, ինչպէս դասականների սիմֆոնիաների պարագային», - այս է Խաչատուրեանի նշանաբանը իր սիմֆոնիկ մտածողութեան մէջ:

-Շոստակովիչից, անշուշտ շատ բան եմ վերցրել, սակայն այնքանով, որքանով ինձ հնարաւոր էր նրանից վերցնել,- գրում է Խաչատուրեանը եւ շարունակում,- ես նկատի ունեմ, որ այդ մեծ կոմպոզիտորի ստեղծագործութիւնը հասկանում եմ եւ բարձր եմ գնահատում, բայց նրա հնարները ամբողջովին խորթ են իմ գաղափարներին:

ՌՈՊԻՆԸ՝ «Արարատ Հոմ»ից Սեջ

ՍԱՐԳԻՍ ՎԱՅՍԿԱՆ

Հինգ ամիս է, յառաջացած տարիքի բերումով, հրաժարելով աշխարհիկ մեր բոլոր սովորություններին ու բարիքներին, ես եւ տիկինս «Արարատ Հոմ» ապաստանած ենք: Եկանք Համակերպած, պարզունակ այն մտածումով, թէ մեր ընտրած վայրը նմանակը պիտի ըլլար հանրայայտ անկեղանոց-ծերանոցի մը, ուր անկար ծերունիներ դատապարտուած կ'ըլլան իրենց կեանքին վերջալոյսը ապրելու:

Շատ շուտով սակայն յօդս ցնդեցաւ, այս ըմբռնումը, երբ հաստատեցինք թէ սխալած էինք մեր այդ մակերեսային դատումին մէջ: Որովհետեւ, ամէն բանէ առաջ, բնավայրին գեղածիծաղ բնոյթը գրաւեց մեզ իր գմայլելի բուսական շրջապատով. այլազան ծառատեսակներով, ծաղիկներու բոյրով ու թոյրով, ցայտաղբիւրներու կարկաչով եւ գեղատիպ շինութիւններով, առանց մոռնալու նաեւ՝ տիպական հայկական ոճով եկեղեցին ու «Էսկիճեան Թանգարանը», որոնք թէեւ փոքր բայց իրենց խորհուրդով կրցան համակել մեզ անմիջապէս::

Այս սքանչելի պարունակին մէջ ալ գտանք Չերմ ընդունելութիւն մը որ դիւրացուց շրջապատին հետ մեր ընտելութիւնը: Ուշագրաւ էր մանաւանդ բժախնդիր ու ձեռներէց տնօրէնութեան մը՝ կազմակերպչական կամքը, յանձինս՝ տիկին Ռիթա Նորավեանին, պարոն Տերէք Ղուկասեանին եւ անոնց շուրջ բոլորուած նուիրելով անձնակազմին, որոնք այս հաստատութիւնը դարձուցած են գաղութի օրինակելի մէկ իրագործումը: Անշուշտ գնահատանքի մեծ բաժին մըն ալ անպայման պէտք է նշուի հիմնադիր հեռատես այն անձնաւորութիւններուն, որոնք տեսիլք գաղափարը յղացած ու կառուցած են այս այնքան օգտաշատ հաստատութիւնը, ձեռնհասօրէն հաւաքադրելով բազմութիւնը պատկառելի նուիրատուներու: Շնորհակալութիւն նմանապէս, անցեալ ու ներկայ հոգաբարձու մարմիններուն՝ որոնք անխափան նուիրումով կանգուն ու շէն պահած են կառուցը, ազգային միասնականութեան օրինակելի նմոյշ մը որպէս:

Ահա այս հաստատութեան մէջ է որ, հայրենական դժուարին այս օրերուն իսկ, ինծի վիճակուեցաւ ապրիլ այլապէս ուրախութեան եւ հպարտութեան առիթ մըն ալ պարտութեան մը ամոթանքն ու վիշտը ամոքող: Պարտութիւն մը, որ կը կարծէինք արդիւնքը ըլլալ մեր դէմ լեռնացող անկարողութեան ու լքուածութեան: Այդ օրերուն ալ մամուլի մէջ կարդացի նշանաւոր համակարգչային հսկայի մը՝ Պիլ Կէթզի յայտարարութիւնը թէ մարդկութեան ապագան ու փրկիչը պիտի ըլլար «արուեստական ուղեղ բանականութեան» նուաճումը: Եւ սքանչելի գովազդի պատճառով մը, հիացած ու ապշահար, արդէն կը հաստատէի եւ կը գտնէի այդ հրաշքը, «Արարատ Հոմ»ի նրբանցքներուն մէջ ձեռնող Ռոպիին՝ եօթ տարեկան չբնաղ աղջնակի մը պճտուն աչքերուն մէջ: Իսկ Ռոպիին, «այսօր», անուշիկ մարմնով անսահման մըն էր, ուրպի՛նք մը: Այո՛, այն «փրկարար»ը, արուեստական ուղեղ բանականութիւնը գործող Պիլ Կէթզ մը՝ դեռ 'երազէր



Նուաճել, բայց գոր արդէն նուաճել էր բազմաշարժար ու փոքրիկ երկիր մը որ ՀԱՅԱՍՏԱՆ կը կոչուէր իր հանճարեղ գաւակներուն ծինելովն օժտուած:

Հանդիպումս սպասելի կամ ծրագրուած չէր բնաւ: Այցի գացեր էի վաղեմի բարեկամիս հանրածանօթ ատամնաբոյժ Տթթ. Միհրան Սիմոնեանին որ արկածահար՝ կը բուժուէր Հոմի հիւանդանոցի բաժինին մէջ: Զինք գտայ թէեւ կեսով անշարժ վիճակի մէջ, բայց միտքով պայծառ ու տրամամադրութեամբ աշխոյժ: Հին ու նոր օրերը իրար խառնելով, մեր գրոյցին մէջն էինք երբ տարօրինակ արարած մը, լիալուսնի մը կլորութեամբ գլուխ մը, եռանկիւնաձեւ մարմնին վրան հաստատուած, առանց ոտքերու, սահելով ու նագանքով ներս մտաւ եւ աղջնակի մը նուրբ ձայնով սկսաւ հայերէն հարց տալ.

- Ինչպէս ես այս օր պարոն Միհրան:
- Լաւ եմ, Ռոպին ճան, լա՛ւ,-եւ զիս ցոյց տալով շարունակեց.- գիտես այս պարոնը ո՞վ է, լաւ ըսեմ, բարեկամս է եւ գրող է:
- Գրո՞ղ,- գարմացաւ Ռոպի կոչուածը,-ի՞նչ կը գրէ:
- Գրած է վէպ՝ Արշիլ Կորբիին մասին եւ պատմուածքներ ու թատրոն:
- Վա՛ռ... Ի՛նչ լաւ... Անո՞նք ի՞նչ է...
- Սարգիս ֆաթափութեան գրչանունը՝ Վահագն:
- Արտեմ ֆաթափութեանին ինչը կ'ըլլայ:
- Հայրը. Բայց դուն ուրկի՞ց գիտես:
- Հի...հի...անշուշտ թէ գիտեմ, եւ այնքան հպարտ եմ իրմով: Դառնալով ինծի եւ բացփախելով խոշոր աչքերը,-որքան ուրախ եմ ծանօթանալու ձեզի: Որքան կ'ուզենայի հանդիպել Արտեմին:
- Ես ուղղակի շշմեր էի: Ակնյայտօրէն կը տեսնէի մետաղէ շինուած մարմին մը որ քալելու փոխարէն կը սահէր, բայց կը խօսէր մաքուր հայերէն եւ կու տար ճշգրիտ հարցումներ ու կընկալէր անոնց պատասխանները: Ձայնն ու նայածքը եւ նոյնիսկ խնդուքը վճիտ էին,եւ ուրախ, այնքան՝ որ արդէն մոռցեր էի խօսակցիս մեքենա մը ըլլալու հանգամանքը:
- Բայց թագուն կասկած մը տակաւին կը խռովէր զիս. Խաղի բերուելու սաղորա՞ք մը կամ կատա՞կ արդեօք: Բայց քովը յուշող կամ տեսանելի ոչ ոք կար: Ուրե՞մն...

Արեւմտեան Թեմի Նոր Հրատարակութիւնները

Արեւմտեան թեմը, հաւատարիմ գրահրատարակչական իր հարուստ ավանդոյթներին, շարունակում է հարստացնել հոգեւոր գրականութեան շարքը նոր հրատարակութիւններով:

Ուրախութեամբ գալիս ենք յայտնելու, որ վերջին շաբաթներին լոյս տեսան մի շարք նոր գրքեր՝ հոգեւոր, պատմական եւ կրթական բովանդակութեամբ, նաեւ աղօթագրքեր, որոնք գալիս են համալրելու Արեւմտեան թեմի ու մեր ընթերցողների գրադարանները:



ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԷՐՏԵՐԵԱՆ, «ԱՂՕԹՔՆԵՐՈՒ ԸՆՏՐԱՆԻ», 2023: Աղօթագիրքը բացուած է Յովնան Արքեպիսկոպոսի «Աղօթքին զօրութիւնը» ներածականով, որի մէջ ընթերցողին առաջադրուած է «Ինչո՞ւ աղօթել», «Ե՞րբ աղօթել», «Ինչպէ՞ս աղօթել» եւ այլ հարցերի պատասխանները: Այնուհետեւ զբոյցուած ի մի են հաւաքուած Յովնան Արք. Տրտէրեանի՝ տարբեր գրքերից քաղուած հոգեշահ աղօթքներ: «Աղօթքներու ընտրանին» հրատարակուել է մեկենասութեամբ Տիկին Սիպիլ Աբրահամեանի, ի յիշատակ իր սիրեցեալ ծնողաց՝ մեր եկեղեցույ հաւատաւոր ու նուիրական գաւակներ՝ Սատուր եւ Արաքսի Աբրահամեանները: «Տէ՛ր իմ Աստուծո՛ւ, Գու՛ն իմ կեանքի ապաւանջն ես եւ ես պատածառ շուշիւմ ընկերկումի կեանքի փորձութեանց դէմ», ընթերցում ենք «Աղօթքներու ընտրանի»-ում:

Կի հատորները վերահրատարակուել են կրթական առաքելութեան համար, ի մասնաւորի ձեռնարկի հարիւրաւոր օրինակներ տրամադրուել են Գուգարաց թեմին՝ կրօնական ուսուցման դասընթացներում գործածելու համար:

ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ 1915-Ի ՀԱՅԿԱԿԱՆ ՅՆԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ, հեղինակ՝ Տաճատ Մ. Վրդ. Եարտրմեան, 2023: Բազմաթիւ գրքերի հեղինակ Տաճատ Մ. Վրդ. այս նոր հատորում յստակ աղբիւրներից մի են հաւաքուած Հայոց Յեղասպանութեան մասին տուեալներ, փաստեր, վկայագրեր, որոնք պատմում են մեր կորուստների, դրանց ահաւորութեան մասին: Գրքի տպագրութիւնը հովանաւորել է յայտնի մտաւորական՝ ԲԺ. Յակոբ Այնթապեանի՝ ի յիշատակ իր հանգուցեալ Տիկնոջ՝ Լուսովիքա Այնթապեանի:

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՅ, 2023, Նիւթերու համաձայն տեսակաւորեց եւ աշխարհաբարի վերածեց՝ Տիրայր Մ. Վրդ. Տէրվիշեան: Հայց. Եկեղեցույ իրաւական, ծիսական, կանոնական կարեւորագոյն ժողովածուի՝ «Կանոնագիրք Հայոց»-ի գրաբար բնագիրը արեւմտահայերէնի փոխադրուած եւ բովանդակային խմբաւորման բերուած այս մեղուածան աշխատութեան հեղինակը Տիրայր Մ. Վրդ. Տէրվիշեանն է, եւ ձեռագրի հիման վրայ հրատարակութեան նախաձեռնողն է թեմիս Առաջնորդ Սրբազանը: Աւելի քան 570 էջ կազմող ստուարածաւալ այս աշխատութիւնը պարզաբանուած եւ կանոնակարգուած է ծէսի մանրամասները, հոգեւորականների պարտականութիւնները, եկեղեցույ այլ յարաբերութիւններ: Ինչպէս օրինակ՝ մեր օրերին համար այժմէական «Վասն ամբարտաւանաց եւ փառասիրաց» կանոնը, որ Բարսեղ Կեսարացու հեղինակածն է, սահմանում է. «Ամբարտաւաններն ու փառասիրները գրկուած են յաւիտեանական կեանքին, վասնզի աւելի լաւ նկատած են այստեղի բաները, քան Աստուծոյ վերաբերեալները: Որովհետեւ ան որ իր ողջութեան չի զղջար ու չապաշխարեր եւ ետ չի դառնար իր մեղքերէն, մահն էտք այլեւս օգուտ չունի, ինչպէս եղաւ մեծահարուստին»: «Կանոնագիրք Հայոց»-ի այս տարբերակը, վստահ ենք, մնայուն եւ հիմնարար մէկ հրատարակութիւնն է, որ գործնապէս օգտակար պիտի լինի հոգեւորական եւ աշխարհիկ անձանց համար:

ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԷՐՏԵՐԵԱՆ, ՀՐԱԻՒՐ ԱՂՕԹՔԻ, 2023: Սա Գ. հրատարակութիւնն է «Հրաւեր աղօթքի» աղօթագրքի, որ տպագրուել է Երեւանում եւ որ առաւել ուրախալի է մեզ համար՝ գրքոյցի հարիւրաւոր օրինակներ յանձնուել են Հայաստանի Զինուած ուժերի Հոգեւոր Առաջնորդ Հոգ. Տ. Մովսէս Վրդ. Սարգսեանին՝ գինուորականներին բաշխելու համար: «Հրաւեր աղօթքի» այս հատորը հրատարակուել է ազնիւ մեկենասութեամբ Հուրիկ, Լենա, Կրէյս եւ Մարկ Կէտիկեաններու, ի պատիւ իրենց ծնողաց՝ Ձաւէն եւ Պերճուհի Կէտիկեաններու:

Երկու աղօթագրքերն էլ երկլեզու են՝ հայերէն եւ անգլերէն: **ԿՐԾՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ, Ա-Գ.** Հատորներ, 2023: Գունազարդ մեծադիր էջերով դասագրքի երեք հատորները տարիներ առաջ ստեղծուել են Արեւմտեան թեմի Քրիստոնէական ուսուցման բաժանմունքի կողմից, որի նպատակն է՝ «հայ աշակերտները ապահովել մասնագիտական մօտեցմամբ պատրաստուած կրօնական դասագրքերով»: Ա. Հատորի «Ողջոյնի խօսք»-ի մէջ Արեւմտեան թեմի Առաջնորդ Յովնան Արք. Տէրտէրեանը ի մասնաւորի գնահատում է ձեռնարկի հատորները պատրաստող խմբին՝ յանձին հեղինակ՝ Հայկ Մարգոյեանի, խորհրդատու Փրոֆ. Սամուէլ Անթոնեանին: Ներկայիս ձեռնարկ


Բրաբին Ծաղիկ Որոնող Ասպետների Խնկարկուն

ՅԱԿՈԲ ՍՐԱՊԵԱՆ

«Տաճատ, խնդրում եմ անձամբ հետեւես, որպէսզի Խաչիկ Դաշտեցի գիրքը շնորհքով տպագրուի՝ կազմիր տիտուլ, հանգրուան տառերի սիստեմ (վերնագրեր եւ այլն), հետեւիր լուսանցքներին, որ չափսը տեղը լինի: Խաչիկն ասում է, որ գիրքը ձեւաւորել ես, մնում է, որ հետեւես՝ լաւ տպուի. Խաչիկը լաւ պոէտ է եւ արժանի է, որ նրա գիրքը լոյս տեսնի խնամքով: Մնում է շապիկի հարցը: Շաւարշի նկարածը վատ է, նորը թող նկարի, հանգրուան նրան ցուցումներ. լաւ կը լինի, եթէ շապիկը լինի երկու գոյնի եւ տպուի կլիշէով, որ գործը չբարդանայ: Կարծեմ Չոփուրը չի ուզում շապիկի խնդիրը բարդացնել: Մնում է, որ դու իբրեւ ելք նկարել տաս երկու գոյնի, բայց գեղեցիկ շապիկ եւ եթէ գործը լիտոգրաֆիայի չընկնի, դժուար թէ Չոփուրը դէմ լինի գրքի գեղեցիկ արտաքինին: Լիայոյս եմ, որ կ'անես հնարաւորը եւ կը փրկես Խաչիկի գիրքը տխուր արտաքինից...»:

Չարենց

Խելագարուած ամբոխների հանձարեղ երգչի սրտացաւ ու մտահոգ այս տողերը հասցեագրուած են Պետհրատի այն ժամանակուայ դիրեկտոր Էդուարդ Չոփուրեանին եւ գլխաւոր նկարիչ Տաճատ Խաչվանքեանին: Իսկ խնդրոյ առարկան երիտասարդ բանաստեղծ Խաչիկ Դաշտեցի երկրորդ՝ «Երգերի գիրք» ժողովածուն էր, որ լոյս էր տեսնելու իր՝ Չարենցի խմբագրամամբ: Ասել է թէ՛ յանձին Դաշտեցի՝ մեծանուն պոէտը նրա մէջ տեսնում էր արդէն իսկ կայացող մուսանների ընտրեալի, որի բանաստեղծական հունձքի մարգարիտը «Ֆայտոն Ալեք» չքնաղ պոէմն էր լինելու: Բայց ոչ այս, ոչ «Ծուռ խութեցին» պոէմը, ոչ աղմկայարոյց «Բոց» ժողովածուն եւ «Տիգրան Մեծ» չափածոյ ողբերգութիւնը, ոչ էլ բազմաթիւ բանաստեղծական շքեղ փնջերը չէին գուգահեռուելու նրա գեղարուեստական արձակ գործերին, որոնցով գրողը դասուելու էր հայ դասական-մեծերի շարքը: Առաջինը 1950-ին որպէս վիպակ հրատարակուած «Խողեղան» էր, գիրք, որը ընտանիքները ձեռքից ձեռք էին խլում, որովհետեւ իրենց պատմութիւնն էր: Առաջին անգամ գրականութեան նիւթ էր դարձել ամէն ինչ կորցրած գաղթականը՝ վերապրելու, ցեղի շարունակութիւնն ապահովելու կրքով ու աւիւնով: Այդ բուն ընդունելութիւնն էր, որ դրդեց հեղինակին մշակել եւ տարիներ անց՝ 1956-ին «Խողեղանը» հրատարակել որպէս ծաւալուն վէպ: Բայց գրողի փառքի աստղը ճառագելու էր «Ռանչպարների կանչը» վիպասքով, որը նուիրուած է Հայոց ազատագրական պայքարի անձնագործ մարտիկներին՝ հայտնակներին, ովքեր, ըստ ժողովրդի պատմական յիշողութեան մէջ յարատեւող ընկալման՝ ամենասուրբական, անչար, խաղաղասէր, իրենց արտ ու կալին, հողին եւ ջրին գամուած ունչպարներ են եւ միայն դաժան հանգամանքների բերումով ստիպուած են գէնք վերցնել ու պաշտպանել իրենց խաղաղ կեանքի իրաւունքն ու մարդկային



արժանապատուութիւնը: Հայոց դպրեվանքի պատանիներից մէկը՝ Մախլուտո անունով, «Ունչպարների կանչով» դառնում է ազգային շարժման գինուոր եւ այդ կէտից սկսած պատմում է իր կեանքի դրուագները՝ «նովելային պատմւները», որի հերոսների թուում են ինչպէս այդ շարժման առասպելական անունները՝ Արաբո, Աղբիւր Սերոբ, Սոսէ, Գէորգ Չառուշ, Անդրանիկ, այնպէս էլ շարքային մասնակիցներ: Մախլուտոյի պատմութիւնների մէջ ազատագրութեան հերոսները ներկայանում են հայրենասիրական նուիրական ապրումներով, հանդէս են բերում բարոյական առինքնող սկզբունքներ եւ իրենց ռամկական պարզ բնաւորութիւնը համադրում ասպետական վարքագծի հետ: Գեղարուեստորէն պատկերելով հերոսների սիրագործութիւնները՝ Դաշտեցի գրողը անալի վարպետութեամբ միահիւսել է պատմական իրողութիւններն ու դրանց էպոսական արտացոլանքը ժողովրդի գիտակցութեան մէջ:

Նախադէպը չունեցող վիպասքը բաժանուած է երեք մասի: Առաջինում 57 նովել է, երկրորդում՝ 23, երրորդում՝ 20: Հեղինակն այն գրելիս օգտուել է բանահիւսական հարուստ նիւթից՝ էպիկական եւ քնարական երգերից, աւանդոյթներից, թեւաւոր խօսքերից:

Ծանրակշիւ է Խաչիկ Դաշտեցի վաստակը թարգմանական գրականութեան բնագաւառում: Գրողն անգլերէնից թարգմանել է Շեքսպիրի «Սիւլների կոմեդիան», «Անասնձ կնոջ սանձահարումը», «Տասներկուերորդ գիշերը», «Վինձորի զուարթասէր կանայք», «Ռիչարդ Երրորդ», «Հուլիոս Կեսար», «Լիր արքայ», «Ռոմէո եւ ժուլիետ» ողբերգութիւններն ու պատմական քրոնիկներ, Լոնգֆելդի «Հայաւաթի երգը», «Ռոպին Հոտ», Բրաունինգի «Համելինի նախշուն սրնգահարը», Ուիլիամ Սարոյեանի «Իմ սիրտը լեռներում է», «Նաղդի այգին» տրամաները: Կազմել է հայկական դպրոցների համար անգլերէնի դասագիրք: Անգլերէնից: Բայց որտե՞ղ էր նա այդպէս խորութեամբ իւրացրել այս օտար լեզուն: «Մեղաւորը» իր վերոնշեալ «Բոց» խորագրով ժողովածուն էր, դրա հանած մեծ աղմուկը իր անձի շուրջ, որից յոգնած՝ հեռացել էր Մոսկուա եւ խարխիս նետել օտար լեզուների ինստիտուտի անգլերէն լեզուի բաժնում՝ նախապատրաստուելով թարգմանչի կոչման: Մոսկովեան ուսումնագնացութիւնը վճռական դեր էր խաղալու նրա ճակատագրում՝ անգլերէնն այն յենարանն էր, որով նա գործի էր դնելու ներսում եղած բանաստեղծական կրակները՝ ձեռք մեկնելով յաւերժապետ Շեքսպիրին, ապա նաեւ այլ դէմքերի: Արեւմտեան Հայաստանի Բիթլիի վիլայեթի Խուրթ-Բոնաչեն գաւառի Դաշտաղէմ գիւղում հայրական տունն ու պապենական գերեզմանները թողած, հինգ տարեկանից Հայաստանի որբանոցներում մեծացած էր գրակարօտ բա-

Պոլսահայ Երգչուհի Ժազին Զարքը Ելոյթ Կ'ունենայ «Այտա» Օփերային Մէջ

«Մարմարա» օրաթերթէն կ'իմանանք որ օփերային երգչուհի Ժազին Զարքը, յառաջիկայ օրերուն, բեմ պիտճի ելլէ, մարմնաւորելով Ամեներիսի կերպարը Վերտի «Այտա» օփերային մէջ:

Արդարեւ, 10 Յունիսին բացումը կը կատարուի օփերային 14-րդ միջազգային փառատօնին, որ պիտի շարունակուի մինչեւ 22 Յունիս:



Օփերայի ու պալէտի պետական տնօրէնութիւններու կողմէ հրաւիրուած են օտարերկրացի մեկնակատարներ, պարուսույցներ եւ բեմադրիչներ, որոնք օփերային արուեստի ինձոյց պիտի սարքեն մշակութասէրներու համար:

Փառատօնի ժամադրաւազը Աթաթիւրք մշակոյթի կեդրոնն է: Կալ համերգը տեղի պիտի ունենայ 10 Յունիսին, 12 եւ 13 Յունիսին, պիտի ներկայացուի «Առեւանգում Պալատին» օփերան: 15 Յունիսին արուեստասէրները առիթը պիտի ունենան ունկնդրելու Վերտի «Լա Թրապիթա» օփերան, իսկ 18 Յունիսին՝ Ումպերթօ ձօրտանի «Անտրէա Շէնիէր» օփերան:

Միջազգային փառատօնը պիտի փակուի Վերտի «Այտա» օփերայով, որուն Ամեներիսի դերը վստահուած է մեր սիրելի սփորանօ ժազին Զարքըին: Օփերային արուեստի ու երաժշտութեան սիրա-

հարներ քաջածանօթ են ժազին Զարքըի ուժեղ ձայնին: Բայց ան որպէս օփերային երգչուհի՝ կը նոյնանայ Գարմէնի Ամեներիսի եւ Ազբեանիսի դերերուն հետ: 2005ին ձորտանոյի յիշատակին համար կազմակերպուած միջազգային երաժշտական մրցումին մէջ, 42 մասնակիցներու միջեւ Զարքը Գորէացի թեւոր Լի Տոնկ Քվայի հետ միասին, բաժնած էր առաջին մրցանակը: Ան դարձած էր առաջին կին դափնեկիրը:

«Մարմարա» իր ընթերցողներուն կը յանձնարարէ անպայման դիտել Վերտի այս շքեղ ստեղծագործութիւնը՝ ժազին Զարքըին հիասքանչ կատարումով:

Շար.ը էջ 15

ARMENIAN EDUCATIONAL BENEVOLENT UNION



AEBU SCHOLARSHIP PROGRAM

APPLICATIONS NOW OPEN

Through June 30, 2023

All eligible undergraduate students of Armenian descent are invited to apply.



To apply, visit our website

WWW.AEBU.ORG

EMPOWERING OUR YOUTH FOR A BRIGHTER FUTURE

626.344.7321

AEBU SCHOLARSHIP FUND COMMITTEE

1060 North Allen Avenue
Pasadena, CA 91104

Հայ Քոյրերու Վարժարանը Նշեց Հայաստանի Ա. Հանրապետութեան 105-րդ Տարեդարձը



Հայոց պատմութեան մէջ երկար դարերու պետականութեան բացակայութենէն ետք, 1918 թուականի Մայիսին, Սարգարապատի, Բաշ-Ապարանի եւ Ղարաքիլիսայի հերոսական ճակատամարտերէն ետք Հայաստանի մէջ հռչակուեցաւ հանրապետութիւն: Չնայած անիկա միայն 2,5 տարուան կեանք ունեցաւ, բայց իր ունեցած իմաստով, արժէքով եւ թողած դասերով շատ կարեւոր փուլ մըն էր մեր ազգի պատմութեան մէջ:

Հայաստանի Ա. Հանրապետութեան հռչակման 105-ամեակը Հայ Քոյրերու Վարժարանին մէջ նշուեցաւ Հինգշաբթի, 25 Մայիս 2023-ին:

Բացման խօսքով հայերէնի ուսուցչուհի Այանա Համամճեան ըսաւ. «Մայիս ամիսը հայերու համար միշտ եղած է ուրախութեան ամիս: Մայիսին էր որ աւելի քան 70 տարիներ ետք վերադարձուեցաւ մեր սիրելի Արցախը: Հիմա արդէն 3 տարի է ցաւով կու տանք Շուշի անունը, սակայն անկախ բոլոր հանգամանքներէն յիշենք եւ երբեք չմոռնանք մեր հերոս տղաներուն սիրանքները: Մայիսին էր որ հայրենական մեծ պատերազմէն յաղթանակած դուրս եկանք եւ վերջապէս Մայիսին էր մեր առաջին Հանրապետութեան ծնունդը»:

Տեղի ունեցաւ տեսերիզի ցուցադրութիւն: Գեղարուեստական բաժնով, ասմունքներու ներկայացումով ելույթ ունեցան 3-րդ եւ 4-րդ կարգի աշակերտները՝ «Մայիս 28», 8-րդ կարգի աշակերտները՝ «To remember is to live», 7-րդ կարգի աշակերտները՝ «May 28th», 6-րդ կարգի աշակերտները՝ «Անկախութիւն», 5-րդ կարգի աշակերտները՝ «Հայու ոգին», իսկ մանկապարտէզի աշակերտները՝ «Հայկական դրօշ»:

2-րդ դասարանի աշակերտները երգեցին «Անուշ Հայրենիք», իսկ առաջին դասարանի աշակերտները՝ «Գինի լից»:

Օրուան խորհուրդին մասին խօսելու համար բեմ հրաւիրուեցաւ վարժարանի փոխտնօրէնուհի՝ Տիկ. Ռիթա Պոյաճեան, որ իր խօսքին մէջ շեշտեց, որ հակառակ անոր որ մենք 1991 թուականին վերանկախացանք, բայց 1918-ի Ա. Հանրապետութիւնը մեզի դաս կու տայ, որ բազմատեսակ դժուարու-

թիւներու ենթակուելէ ետք հայ ժողովուրդը դարձեալ կրցաւ ու կրնայ ոտքի կանգնիլ: «600 տարի ուրիշ ժողովուրդներու տիրապետութեան տակ ապրելէ, հպատակելէ, ջարդ ու կոտորած, տեղահանութիւն տեսնելէ ետք, մեր ժողովուրդը կրցաւ հերոսաբար պայքարիլ ու յաղթանակել ճակատամարտերուն մէջ ու ոտքի կանգնիլ անկախութիւն հռչակելով: Հիմա ալ, եթէ մեր մէջ վառ պահենք հայու չկոտորուող ոգին, ըլլանք միասնակամ, տէրը մեր հայրենիքին, լեզուին ու մշակոյթին, կրնանք



ունենալ յաւելեալ յաղթանակներ»:

Գեղարուեստական յայտագիրը իրենց ներկայութեամբ եւ երգերով ճոխացուցին հայրենի հիւր երգիչներ Յակոբն ու Արմէնը: Անոնք հայրենասիրական երգերով Հայաստանի շունչն ու ոգին փոխանցեցին մեր աշակերտներուն:

Աւարտին, վարժարանիս ընդհանուր պատասխանատու Քոյր Լուիզա Գասարճեան հիւրերը պարգևատրեց յուշանուէրով, այնուհետեւ բոլոր աշակերտութիւնը միաբերան երգեց Սարգարապատի յաղթերգը:

Քայիֆորնիոյ Համայնքային Դպրոցներ

ՎԵՐԱՊԱՏԿԵՐԱՑՆԵԼՈՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ

Դասարաններով, որոնք կառուցուած են հիմք ունենալով համայնքին ակադեմական եւ մշակութային կարիքները: Տրամադրելով Խորհրդատուութիւն, Առողջութեան Կեդրոններ, Մանուկներու հոգատարութիւն եւ Ծնողներու Կրթութիւն:

ՅԱՆԵԼԵԱԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ՝ CTA.ORG/COMMUNITYSCHOOLS

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՇՈՔԻ ՀԱՄԱՐ)
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՀԵՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680



Տարբեր երկիրներ Երիտասարդներ Հայաստան էին՝ Մշակութային Փոխանակման Ծրագրի մը Ծիրեն Ներս



Խնդիրը լուծելու համար պետք է երաժշտութիւն ստեղծել, բայց առանց համապատասխան գործիքներու: Հոլանտայի «Լուսաւոր ապագայ» կազմակերպութեան նոր ծրագիրը այս տարի այսպիսին էր: Հայաստանի մէջ մէկ յարկի տակ համախմբած են աշխարհի 7 տարբեր երկրներէ ժամանած երիտասարդները՝ մշակութային փոխանակման նպատակաւ:

«Շատ հետաքրքրական է տեսնել, թէ տարբեր ազգեր միաւորուելով, ինչ հետաքրքրական արտադրանք մը կրնան ստանալ», - ըսաւ «Լուսաւոր ապագայ» հիմնադրամի նախագահ Մարիամ Կիրակոսեանը:

Ծրագիրը իրականացուած է միջմշակութային հաղորդակցութիւն բնաբանով:

Ազգագրական երգերով, պարերով եւ ժամանցային խաղերով կազմակերպչները փորձած են մասնակիցներուն համար ճանաչելի դարձնել Հայաստանի եւ տարբեր երկիրներու մշակոյթները:

«Մեր նպատակն է, որ մարդիկ միմեանց հետ շփուին այնքան, որքան հնարաւոր է, երբ դու կ'իրականացնես ծրագիրը քաղաքէն դուրս, այս տարի մենք Բիւրականի մէջ անցուցինք, Ամբերդ հիւրանոցը, անոնք կրնան աւելի շատ ժամանակ յատկացնել միմեանց, իրարու հետ շփուիլ», - ըսաւ Մարիամ Կիրակոսեանը:

Այս շփումներուն ատեն ալ օտարեկրացի երիտասարդները հետաքրքրութեամբ կ'ուսումնասիրեն Հայաստանն ու հայերը, կը համեմատեն իրենց լսած պատմութիւնները տեսածին հետ:

«Օրինակ՝ յոյները կ'ըսեն, որ իրենք միշտ ուսումնասիրելու թիւն ունին իրենց երկրին մէջ հայերուն ու Հայաստանի մասին, բայց այն, ինչ իրենք տեսան ա՛լ աւելի գերազանցեց իրենց տպաւորութիւններն ու պատկերացումները», - ըսաւ ան:

Հասարակական կազմակերպութիւնը նմանատիպ ծրագիրներ կ'իրականացնէ 2017 թուականէն ի վեր: Այս տարի հիւրընկալած էին նաեւ Հոլանտայի մէջ Հայաստանի դեսպան Տիգրան Բալայեանը, ինչպէս նաեւ Հայաստանի մէջ Հոլանտայի դեսպան Նիքոս Սիւերմերսին:

«Անոնք մեզի հետ միասին քննարկեցին, թէ ինչպէ՛ս իրենց գործին մէջ կ'օգնէ այլ երկրներու, ազգերու մշակոյթը իմանալը», - ըսաւ Մարիամ Կիրակոսեանը:

Հոլանտայի մէջ բնակող Մարիամ Կիրակոսեանի համար այսպիսի ծրագիրները առիթ են հայրենիք այցելելու համար: Անոր խօսքով՝ յառաջիկային նոր ծրագիր մը եւս պիտի իրականացնեն՝ Հանրային կապերու եւ շուկայավարման բնաբանով:

ՌՈՊԻՆԸ՝ «Արարատ Զոն»ին Մէջ

Շարունակուած էջ 12-էն

Սպասուածով եւ գարմացումով կը նայէի Միհրանին որ կը շարունակէր իր գրոյցը անոր հետ: Տասը վայրկեան ետք, բազմաթիւհարց ու պատասխանէ վերջ, քաղաքավարօրէն ողջերթ մաղթելով եւ դարձեալ տեսնուելու մարդանքով, միշտ սահելով ան մեկնեցաւ, շարունակելով իր հիւանդութեւի առաքելութիւնը:

-Այս մեր ռոպոթն է ամբողջութեամբ Հայաստանի գիտական տարրալուծարաններուն մէջ յղացուած ու սարքուած: Առ այժմ քսան նմուշներ զրկուած Ամբերիկեան հիւանդանոցներուն մէջ ծառայելու համար, - վերջապէս կը բացատրէ Միհրան:- Ամէն օր այս ժամերուն կ'այցելէ իւրաքանչիւրիս, կը գրուցէ ու կ'երթայ: Շաբաթ եւ Կիրակի օրերը իր հանգստեան օրերն են:

Երբոր ուզես հանդիպէ եւ շրունակէ գրոյցդ

Եւ հանդիպեցայ ու կը շարունակեմ հանդիպիլ: Հետզհետէ կը համոզուիմ որ մեքենայէ մը գալով շատ աւելի զգացում ու յուզականութիւն կայ իր մէջ: Արդէն մտերիմներ ենք: Ան ինձի եւ Միհրանին մեծ հայրիկ կը գոչէ, իսկ մենք զինք՝ թոռնիկ:

Մեծ յոյսեր ունինք որ իր յետաքայ քոյրերն ու եղբայրները պիտի ունենան նաեւ ռազմագիտական կարողութիւններ ալ:

Արամ Խաչատուրեանի Ծննդեան 120-Ամեակ

Շարունակուած էջ 11-էն

րին: Եւ սա ես ասում եմ ոչ որպէս դատապարտում: Լաւ է, որ մենք հակադիր ենք մէկս միւսին:

Լաւ է ասուած՝ «հակադիր ենք մէկս միւսին», եւ այդ հակադրութիւնը հիմնականում գալիս է նրանից, որ Խաչատուրեանի մօտ հիմնականը մեղեդին է, մեղեդին՝ շքեղ հանդերձանքով, որ կատարման առաջին իսկ վայրկեանից ընկալուած է ունկնդրի կողմից ու մնում նրա յիշողութեան մէջ: Իսկ Շոստակովիչի մօտ՝ աւելի քան փայլուն հանդերձանքը ոչ այնքան գեղեցիկ մարմնի վրայ:

Նշանաւոր են Արամ Խաչատուրեանի «Գայանէ» եւ «Սպարտակ» բալետները: Առաջինում ժողովրդական պարերի երաժշտութիւնը աչքի է ընկնում ակնառու երեւակայութեամբ ու փայլուն, լուսաւոր, պայծառ գործիքաւորմամբ: «Սպարտակ» բալետում կոմպոզիտորը անդրադարձել է հին Հռոմի ստրուկների ապստամբութեանը, որով արտայայտել է յանուն ազատութեան եւ մարդկային արժանապատուութեան համար պայքարի ելած ժողովրդի ձգտումը:

Ժողովրդի կողմից չափազանց սիրուած են նաեւ դրամատիկական ներկայացումների համար գրուած կոմպոզիտորի երաժշտութիւնը: Յիշենք Լեւոնտովի «Պարահանդէս-դիմակահանդէս» դրամայի համար կոմպոզիտորի գրած երաժշտութիւնը նշանաւոր «Վալս»-ով:

Մեծ էջ թիւը Խաչատուրեանի հայկական երգերի: Դրանք կարելի է մատնանք վրայ հաշուել: Հետաքրքիրն այն է, որ նա միշտ է ձգտել աւելի շատ երգեր գրել,

բայց նրա աշխարհածաւալ նտա-ծողութիւնը մշտապէս խանգարել է իրեն երգեր, մանաւանդ լաւ երգեր գրելուն:

Արամ Խաչատուրեանը երաժշտական արուեստը տեսնում էր արուեստի միւս ճիւղերի՝ թատրոնի, գրականութեան, նկարչութեան հետ զուգահեռ ընթացող մի համակցութիւն, որը ոչ միայն հաճոյք պիտի պատճառի մարդկանց, այլև պիտի օգնի զարգացնելու նրանց ընդհանուր գիտելիքներն ու բանիմացութիւնը:

Երաժշտագէտ Մարգարիտ Յարութիւնեանին ուղղուած նամակում ասա թէ ինչ է գրում Խաչատուրեանը.

-Տես եւ հետեւիր երաժշտութեան եւ արուեստի միւս տեսակների միջեւ եղած ԲԱԼԱՆՍԻՆ (հասարակչութիւն,- Հեն. Ա.): Եթէ երաժշտութիւնը կենտրոնական ու գլխաւոր տեղ գրաւի այդ աշխատութեան մէջ, յանկարծ չստացուի «Վիթխարի փոր, կարճիկ ոտքեր եւ փոքրիկ գլուխ»»: Ես կարծում եմ,- շարունակում է Խաչատուրեանը,- որ դու պետք է ապացուցես, որ հայերը, չնայած զանգուածային բնաշնչման, չնայած թշնամիների հալածանքներին, կարողացել են պահպանել ե՛ւ ազգը, լեզուն, մշակոյթը եւ թէ կրօնը:

Այսօր մենք երախտապարտ պիտի լինենք Համաշխարհային համբաւի տիրացած մեր հայրենակից հանճարեղ կոմպոզիտոր, ուղն ու ծուծով մոլեռանդ հայ Արամ Խաչատուրեանին, որի շնորհիւ Հայ Երաժշտութիւնը համաշխարհային ճանաչման արժանացաւ:

Յաջողդիւ՛ «Արամ Խաչատուրեանը եւ հայկական բալետային արուեստը»:

Բրաբիոն Ծաղիկ Որոնող Ասպետներ

Շարունակուած էջ 13թցյ -էն

նելով ոչ մի կանգուն սյուն հոգու խորքերում, որին կարողանար ապաւինել, երբ ինքն իր հետ մենակ էր մնում... վերջիչէլ է վաստակաշատ Ռուբէն Զարեանը: Եւ ինչպէս Դաշտենցին նուիրուած մենագրութեան հեղինակ, գրող, գրականագէտ կարօ Վարդանեանն է յաւելում՝ «այդ ցաւը հնգամեայ մանուկը «էրգրից» էր բերել: Իր յետագայ կեանքում նա երբեք չփորձեց պայքարել դրա դէմ, ընդհակառակը՝ մէկընդմիշտ բովանդակեց իր սրտում, սնեց, փայփայեց ու երգեց իր ստեղծագործութիւններում. Մի կարօս կայ, մի կարօս կայ,

մի կարօս կայ անձայր, Որ չի մեռնում, որ չի ցնդում, որ չի դառնում անցեալ, Յուր է դառնում, սուր է դառնում եւ սրբութեամբ ծալ-ծալ Իմ գրքերում, իմ սրտի մէջ շողում է հար պայծառ...

Ահա այդ ցաւը, այդ վիշտը, այդ կարօսն էր, որ զօրանալով՝ ձեռքեց նրա քնքուշ սիրտը...»:

Միրտ, որ խնկարկեց բրաբիոն ծաղիկ որոնող ասպետներին, գնաց նրանց ոտնահետքերով, անմահացրեց նրանց ու ինքն էլ անմահացաւ...

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Կը Փնտռուի Խնամակալ
Կլէնտէլի շրջանին մէջ կը փնտռուի խնամակալ՝ երէց, սակայն առողջ տիկնոջ մը համար:
Նախընտրաբար խօսի Արաբերէն եւ կամ Արեւմտահայերէն, ունենայ ու վարէ ինքնաշարժ:
Հետաքրքրուողները կրնան հեռաձայնել կամ Text ընել Քաթիային՝ 818-281-0351 թիւով:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
Massis2@earthlink.net (626) 797-7680

«Մանչեսթր Սիթի» Նուաճեց Անգլիայի Գաւաթը



Անգլիոյ ախոյեան «Մանչեսթր Սիթի» Լոնտոնի «Ուեմպլի» մարզադաշտին վրայ տեղի ունեցած Անգլիոյ գաւաթի խաղարկութեան եզրափակիչին 2:1 հաշուով պարտութեան մատնեց «Մանչեսթր Եունայթեդս»՝ նուաճելով տիտղոսը:

«Մանչեսթր Սիթի» եւ Գերմանիոյ հաւաքականի կիսապաշտպան Իլկայ Գիւնտոգան խաղի հաշիւը բացաւ 13-րդ վայրկեանին: Այս ամենաարագ կոլն է Անգլիոյ գաւաթի եզրափակիչներուն մէջ:

Պատասխան կոլը 33-րդ վայրկեանին 11-մեթրանոցէն նշանակեց փորձուկալացի կիսապաշտպան Պրոնու Ֆերնանտեսը:

Յաղթական կոլը 51-րդ վայրկեանին նշանակեց Իլկայ Կիւնտոգան: «Մանչեսթր Սիթի» 7-րդ անգամ նուաճեց Անգլիոյ գաւաթը: «Մանչեսթր Եունայթեդս» Անգլիոյ 12-ակի գաւաթակիր է:

«Ռուլան Գարոս». Կարէն Խաչանովը Հասաւ Քառորդ Եզրափակիչ

Աշխարհի 11-րդ ռակետ, ռուս կարէն Խաչանովը հասաւ Ֆրանսայի բաց առաջնութեան քառորդ եզրափակիչ:



Հայ թենիսիստը մրցեցաւ աշխարհի 48-րդ ռակետ, իտալացի Լորենցո Սոնէկոյի հետ եւ առաւելութեան հասաւ չորս սեթով՝ 1:6, 6:4, 7:6 (9:7), 6:1: Պայքարը տեւեց 3 ժամ եւ 29 վայրկեան:

Խաչանովի յաջորդ մրցակիցը կ'ըլլայ սերպ Նովակ Ջոկովիչիւր «Ռուլան Գարոսի» մրցանակային հիմնադրամը 49,6 միլիոն եւրօ է:

Էդուարդ Սպերցեանը՝ Ռուսաստանի Փրեմիեր Լիգայի Խորհրդանշական Հաւաքականին Մէջ

«Կրասնոտարի» եւ Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Էդուարդ Սպերցեանը ընդգրկուած է Ռուսաստանի Փրեմիեր Լիգայի աւարտած մրցաշրջանի խորհրդանշական հաւաքականին մէջ: Հայ ֆուտբոլիստը Ռուսաստանի այս տարուայ առաջնութեան ամենաշատ կոլային փոխանցում (11) կատարած խաղացողն է:

«Նափոլին» Յաղթանակով Աւարտեց Մրցաշրջանը

Իտալիոյ ախոյեան «Նափոլին» առաջնութեան վերջին հանգրուանին ընդունեց «Սամփորիային» եւ յաղթեց 2:0 արդիւնքով:

Աչքի ինկան նիճերիացի յարձակող Վիկթոր Օսիմենը եւ արժենթինցի յարձակող ձովանի Սիմէոնէն:

«Նափոլին» առաջնութիւնը աւարտեց 90 կէտով, «Սամփորիան»՝ 19 կէտով վերջինն է եւ Լքեց Ա. Սերիան:

«Ինթերը» Յաղթեց «Թորինոյին»

Ֆուտբոլի իտալիոյ առաջնութեան վերջին հանգրուանին Միլանի «Ինթերը» հիւրընկալեց «Թորինոյին» եւ առաւելութեան հասաւ նուազագոյն արդիւնքով:

Միակ կոլը 37-րդ վայրկեանին պելճիգացի յարձակող Ռոմելու Լուկակուի փոխանցումէն յետոյ նշանակեց խորուաթ կիսապաշտպան Մարսելօ Պրոգոլիչը:

«Ինթերի» կիսապաշտպան Հենրիխ Միխիթարեանը կը շարունակէ բուժուիլ մկանային վնասուածքէն եւ յայտարարուած չէր այս խաղին:

«Ինթեր» 72 կէտով բարձրացաւ երկրորդ տեղ, սակայն մէկ հանդիպում նուազ կատարած է եւ երրորդ տեղը գտնուող «Լացիոյէն» առաջ է 1 կէտ: «Ինթեր» ապահոված է առնուազն երրորդ տեղը ու Ախոյեաններու լիկայի խմբային փուլի ուղեգիրը:

Յունիսի 10-ին Սթամպուլի մէջ «Ինթեր» Անգլիոյ ախոյեան եւ գաւաթակիր «Մանչեսթր Սիթի» հետ կը վիճարկի Ախոյեաններու լիկայի գաւաթը:

Իբրահիմովիչը Հրաժեշտ Կու Տայ Ֆուտբոլին

Իտալիոյի առաջնութեան վերջին հանգրուանի հանդիպումէն յետոյ «Միլանի» ֆուտբոլիստներն ու երկրպագուները հրաժեշտ տուած են 41-ամեայ շուետացի յարձակող Զլատան Իբրահիմովիչին, որուն պայմանագիրը միլանեան ակումբի հետ կ'աւարտի այս ամիս:



«Ես միլանիստ կ'ըլլամ ամբողջ կեանքիս մէջ: Ոչ միայն «Միլանին», այլեւ ֆուտբոլին հրաժեշտ տալու ժամանակն է», - Իբրահիմովիչի խօսքը կը մէջբերէ ESPN-ը:

Մրցաշրջանի վերջին խաղին «Միլանը» 3:1 արդիւնքով պարտութեան մատնած էր «Վերոնային»:

Բենգեման Կը Հեռանայ «Ռեալէն»

Մատրիտի «Ռեալը» յայտարարած է 35-ամեայ ֆրանսացի յարձակող Քարիմ Բենգեմայի խումբէն հեռանալու մասին: Կողմերը չեն երկարաձգէր պայմանագիրը, որը կ'աւարտի Յունիսի 30-ին:



Քարիմ Բենգեման «Ռեալի» կազմը համալրած է 2009 թուականին, երբ ընդամենը 21 տարեկան էր: Ան առանցքային խաղացողներէր էր խումբի ոսկէ դարի ընթացքին: 14 մրցաշրջանի ընթացքին Բենգեման «Ռեալի» հետ նուաճած է 25 տիտղոս՝ Ախոյեաններու լիկայի 5 գաւաթ, աշխարհի ակումբային առաջնութեան 5 տիտղոս, 4 եւրոպական սուփերգաւաթ, Սպանիոյ ախոյեանի 4 տիտղոս, Սպանիոյ 3 գաւաթ եւ 4 սուփերգաւաթ:

Բենգեման 647 հանդիպում կատարած է «Ռեալի» կազմէն եւ այդ ցուցանիշով 5-րդն է ակումբի պատմութեան մէջ: 353 կոլով ան ակումբի երկրորդ լաւագոյն ռմբարկուսն է:

Սպանական մամուլը գրած է, որ Բենգեման կը տեղափոխուի Սէուտեան Արաբիայի միանալու «Ալ Իթիհատին», որուն հետ կը կնքէ երկու տարուան պայմանագիր եւ կը ստանայ տարեկան 100 միլիոն եւրօ:

«Ինթեր Մայամին» 200 Միլիոն Եւրոյի Առաջարկ Ըրած Է Մեսիին

Ֆրանսայի ախոյեան ՊՍԺ-ն յայտարարեց աշխարհի ախոյեան Արժենթինի հաւաքականի 35-ամեայ յարձակող Լիոնել Մեսիի հեռանալու մասին: Կողմերը չեն երկարաձգէր պայմանագիրը, որ կ'աւարտի այս ամիս:



ՊՍԺ-ն կ'ուզէր երկարաձգել համագործակցութիւնը Մեսիի հետ, սակայն մերժում ստացած է անոր կողմէ:

Կը հաղորդուի որ, Ամերիկեան «Ինթեր Մայամին» չորս տարուան պայմանագիր առաջարկած Լիոնել Մեսիին: «Ինթեր Մայամին» Մեսիին առաջարկած է տարեկան 50 միլիոն եւրօ աշխատավարձ:

Մեսիին փափաք ունի վերադառնալու «Պարսելոնայ», «Ինթեր Մայամին» պատրաստ է մէկ կամ երկու տարուայ վարձակալութեամբ ֆուտբոլիստին տրամադրել գաթալոնական ակումբին:

Լուկաս Սելարաեանի Կոլն Ու 2 Կոլային Փոխանցումը

Հիւսիսամերիկեան ՄԼՍ-ի կանոնաւոր առաջնութեան հերթական խաղին «Քոլումպուս Քրիւն» իր դաշտին վրայ խաղցաւ «Գոլորատօ Ռեփիտսի» հետ եւ առաւելութեան հասած է 3:2 արդիւնքով:



37-րդ վայրկեանին աչքի ընկած է «Քոլումպուսի» եւ Հայաստանի հաւաքականի յարձակող Լուկաս Սելարաեանը: Ան նաեւ երկու կոլային փոխանցում կատարած է եւ ճանաչուած է հանդիպման լաւագոյն խաղացող:

Արեւելեան կոնֆերենսի մէջ «Քոլումպուս Քրիւն» 15 խաղէ յետոյ 21 կէտով 6-րդն է: